

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1862 ԹՈՒԱԿԱՆԻ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ.

ՄԱՐԳԱՐԻՏԻ ԿՏՈՒԶ ԱՆԻԾՔԸ.

(Շարունակութիւն.)

ՅՕԴՈՒԱԾ ՎԵՑԵՐՈՐԴ.

• ՄԱՐԳԱՐԻՒ ԿՆՈՒԶ ԱՆԻԾՔԸ.

Մի առաջին խօսակցութիւնը Մարգարիտի իւր հայրագիր պարոն Քուրթիերի հետ, ցոյց է տուել մեզ, որ նա վերջին օրերում ծանօթացած էր մի հռչակաւոր գուշակող կնոջ հետ, Բուլարդ անուն։ Սա մի տարի յառաջ գաւառից եկել էր գեպ ի Փարիզ և իւր ճարտարութեամբ արդէն զարմացուցել էր թէ մեծատուն և թէ քաղաքացի հասարակութիւնը, այլև համբաւել էր որպէս մի կին որ իւր այցելուների անցածն ու գալոցը աներկբայութեամբ գուշակումէր։ Եւ Մարգարիտ Քուրթիերը լսած էր նորա մասին և դրել էր մտքումը նորա միջնորդութեամբ վերահաստատ լինել, արդեօք Մարկիզ Օրմոնդը ստուգապէս այն յանցաւորն էր, որպիսի համարումէր նորան իւր սիրտը, կամ իցէ թէ գտանվումէր ինքը մոլորութեան մէջ։ Այս պատճառով որոշել էր Բուլարդին և խոստանալով նորան առատ վարձ, համոզել էր գործ դնել ամենայն հնար որսալու Մարկիզը իւր մօտ, այն խորհրդո-

դով որ նա, ինչպէս միւս շատ մեծատունք, խնդրեր գուշակող կնոջից մարգարէանալ իւր գալոցքը։

Տիկինը Բուլարդը, որ շատ լրտեսներ պահումէր և նոցա միջնորդութեամբ տեղեկանալով գերդաստանների գաղտնիքին, գիտեր խոհեմութեամբ գործ դնել դորանց, նոյնպէս վերահասու էր եղել, որ Մարկիզ Օրմոնդը կամէր իւր որդին ամուսնացնել կոմսուհի Րոհանի հետ, բայց երիտասարդ որդին ընդդիմանումէր այս կապակցութեանը, որովհետև նա կրումէր ծածուկ մի այլ սէր իւր սրտի մէջ։ Մի սպասաւոր Օրմոնդի ապարանքից ականջ էր դրել հօր ու որդու մէջ եղած խօսակցութեանը և իմացել էր տուել Բուլարդի լրտեսներից մինին որի հետ բարեկամ էր, որ և գուշակող կնոջ հրամանով առատապէս վարձատրել էր նորան։

Ապա հետև Մարկիզը երեք օր յետ նորա որդու հանդիպմանը Բուրբոնեան Մարգարտին մատուռի մէջ, ստացաւ այս նամակս.

«ՈՂՈՐՄԱԾ ՊԱՐՈՆ ՄԱՐԿԻԶ,

Եթէ կամիք իմանալ թէ ով էր այն կինը որին սիրումէր Ձեր որդին, որ և պատճառ էր նորա ընդդիմութեանը Ձեր կողմից որոշած ամուսնութեանը Հորտենզիա օրիորդի հետ, ապա խնդրեմ շնորհ ընել իմ մօտ եկուց երեկոյի տասերորդ ժամուն։ Խնդրեմ աշխատութիւն յանձն առնուլ Ձեր կամքը յայտնել ինձ այս գրաբերի ձեռնով։ Դա իմ օթեւանս ճշդութեամբ կը նշանակէ ձեզ»։

Թերեզիա Բուլարդ,

որ ներկե ամենայն ինչ որ եղել է, լինելոց է և լինի։

Բուլարդը ուղղղ խորհել էր։ Մարկիզը արդէն շատ բան լսած լինելով այս Սիբիլլայի (մարգարէ կնոջ) զարմանալի գուշակութիւնների մասին, ներս գնաց որոգայթի մէջ, թէպէտ նա յատկապէս ոչինչ հաւատ չունէր դէպ ի մարգարէութեան ճարտարութիւնը։

«Եթէ այդ կինը իմացել է», ասումէր նա ինքն իւր մէջ, թէ իմ որդին ունի մի ծածուկ սիրակցութիւն, ապա պիտի գիտենայ նոյնպէս թէ ով էր նորա յիմար սիրոյ նիւթը։ Ես կամիմ դիմել նորա մօտ։ Եթէ այդ կնոջ ասելիքը հիմնաւոր է, ապա կարելի էր ինձ գտնել այն կապակցութիւնը որ ընդդէմ է իմ խորհուրդներին։

Նա Բուլարդ կնոջ լսարանի բերանից տեղեկացաւ մի ըստ միոջէ նորա օթեւանին և ասաց ապա.

«Գիտութիւն տուեցէք Բուլարդ կնոջը, թէ ես եկուց տասերորդ ժամուն կը հանդիպիմ նորան»։

Լսարերը գնաց, երբ որ Մարկիզը մի ոսկի դրել էր նորա ձեռի մէջ։

Ռուլարդը ստանալով Մարկիզի խոստումը թէ պալու է, լրատար ուղարկեց դէպ ի Վէնսէնն, մի նամակով Քուրբիերեան Մարգարիտ օրիորդի վերայ։

Նամակի բովանդակութիւնն այսպէս էր.

«Այս էգուց երեկոյին, ինն ժամուն կը սպասեմ Ձեզ. տան ժամուն Մարկիզը լինելու է իմ մօտ։ Ամեն մանրամասն տեղեկութիւնը կը ստանաք ձեր անձնանուէր Թերեզիա Ռուլարդից»։

Մարգարիտը այս մի քանի տողերը կարդաց փայլատակող աչքերով։

«Ա՛խ երջապէս», ձայն արձակեց նա, «օրհնեալ լինի Աստուած, նա իմ հօր սպանողը տալիս է ձեռքս. նա և զօրութիւն կը տայ ինձ իմ գործը դէպ ի աւարտ հասուցանելու»։

Այո՛, հասաւ այն օրը որին անհամբերութեամբ ցանկացել էր Մարգարիտը։

Նորա հրամանով ծառայքը լծեցին սայլը, որ պիտի բերէր նորան Փարիզ։ Պարոն Քուրբիերը խմացաւ նորա դիտաւորութիւնը, նորա ուղևորութենից մի փոքր յառաջ։

Նա դոյն րոպէին լուսակցութիւն ունէր Մարգարիտի եղբօր, Լուդովիկոսի հետ, երբ որ նա մտաւ իւր եղբօր առանձնարանը, որ նորան հրաժարական ողջոյն տայ մինչև գալոց առաւօտը։

Լուդովիկոսը վազեց նորան ընդառաջ և բռնեց նորա ձեռը։

«Ընդնիւ քոյր իմ», ասաց նա, «սոյն րոպէիս ահա խնդրելի հօրիցս կրկին և զարձեալ, որ նա երես առ երես ծանօթանար այն պատանի կնոջը, որ սիրուհի ես։ Բայց, նա միշտ անտես է առնում իմ խնդիրը առանց դրա պատճառները յայտնելու, պրէ պատուիրել է ինձ, որ քեզ չյայտնեմ իմ սիրածի անունը։ Բայց ես չկամիմ այսուհետև ծածուկ պահել իմ դաղտնիքը։ Դու պիտի լսես դորան և ապա օրհնական լինիս ինձ փափկացնելու մեր Հայրը։ Ուրեմն, խմացիր, իմ սրտի ընտրածի անունն է —»

«Լա՛ռ, Թշուառական դու, լա՛ռ», ձայն արձակեց ահաբեկուած ալևորը։

Այս սաստողութիւնը անօգուտ եղաւ։ Կրակոտ երիտասարդի ախտերի հեղեղը թափուեցաւ վերևից և նա ձայն արձակեց.

Այդ աղջիկը ասվում է Ֆելիսիտէ Օրմոնդ, անմեղութեամբ ու գեղեցկութեամբ հաւասարապէս օրհնած։ Նորա հայրը, մի սիրարժան, աղնիւ մարդ է, Մարկիզ Օրմոնդը։ Ի՛նչ ունի պարոն Քուրբիերը և դու ինչ ունիս յառաջ բերելու ընդդէմ իմ սիրուն։

Լուդովիկոսի բերանից դուրս եկած անունը ահ ու սարսափ բերեց Մարգարիտի վերայ։ Նա մի երկիւղալից ձայն արձակեց։ Նորա դէմքի ծանութիւնը փոխուեցաւ դէպ ի զարհուրանք։

«Ֆելիսիտէ Օրմոնդ», մոմովից քոյրը, «այդ անունը —»

«Դա է իմ գալոց աների անունը»։

«Երբէք, երբէք», ձայն արձակից քոյրը, «կարող չէ այդ մարդու աղջիկը քո ամուսին դառնալ»։

«Ի՛նչ պատճառ ունիս դու ընդդէմ այս աղնիւ տոհմին», ասաց սաստկութեամբ Լուդովիկոսը։ «Ես կամիմ դիտել այդ»։

Մարգարիտը մօտ էր ահա ասելու Նորան ճշմարիտը. բայց դպաստացաւ և մի վարք լռութենից յետոյ պատասխանեց։

«Ես կարող չեմ և չկամիմ այժմ հաշիւ ու համար տալ քեզ։ Ապագան միայն ասելիք քեզ։ այն ըոպէից, երբ որ դու կը խնամենաս այդ տոհմի հետ, չես այլ ևս լինելու իմ եղբայր։ Մեք կը բաժանուինք միմեանցից և երբէք այս կեանքումն չենք տեսանելու իրար»։

Խարկութենից արտասուք եկան երիտասարդի աչքերը։

«Ի՛նչու համար այդպէս ներհակ էք դուք անբաղդ Փլըմխտեին», ասաց երիտասարդը։ Խնդրեմ վերջապէս մեկնել ինձ այդ ծածկամիտ առակը։

Այս տեղ պիտոյ է կցել այն ծանօթութիւնը, որ Լուդովիկոսը իւր ծնողի մահուան միջոցին լինելով տակաւին մի քնքուշ մանուկ, վաղուց արդէն ջնջուել էր Նորա յիշողութեան տախտակից ահաւոր անցածի պայծառ յիշատակը, և Նորա մանկական կեանքը չդառնացնելու համար, օր չարչարանքի պատմութիւնը յիշել չէր Նորան ոչ հանդուցեալ մայրը, ոչ Նորա քոյրը և ոչ պարոն Քուրբիները։ Լուդովիկոսը ոչինչ չգիտէր, բայց միայն, թէ իւր հարազատ հայրը կանուխ մեռած էր և թէ պարոն Քուրբիները որդեգրել էր իւրեան և իւր քոյրը։

Պարոն Քուրբիները մեղմութեամբ վեր կալաւ տրտմած երիտասարդի ձեռը, դուրս տարաւ Նորան սենեկից, խօսելով այսպէս.

«Լռէ՛ այժմ մեզ միայն, իմ բարի որդի. ես ունիմ Մարգարիտի հետ խօսելու առանձին։ Հաւատի կացիր, որ քո բաղդաւորութիւնը միայն կրումեմ սրտիս մէջ»։

Մարգարիտը, մոքերի մէջ խորասոյզ եղած, մնացել էր սենեկի մէջ տեղը կանգնած։

Պարոն Քուրբիները մօտ գնաց Նորան։

«Ի՛նչ բանի վերայ մտածումիս դու, Մարգարիտ», հարցրեց նա ծանրաբարոյ դէմքով։

Մի խորին հառաչանք Նորա պատասխանուն յուզմունքից եղաւ։

«Յա՛ւ է ինձ տեսանել իմ եղբայրս վշտացած»։

«Դու կարող ես Նորա վիշտը դէպ ի ուրախութիւն փոխել», պատասխանեց ալևորը, «և այդ, մի հատ խօսքով — դուրս հանիր դորան բերանիցդ, իմ զաւակ, դուրս հանիր»։

«Ու այդ խօսքը ինչպէս է» ասաց Մարգարիտը աղօտ ձայնով։

«Դա է. Ռո-Ռիան, իմ դուստր»։

Արքարիտը վեր թռաւ տաստկութեամբ։

«Յաղթութիւն—նորաձն», աղաղակեց աղջիկը։ Ես իմ անբադդ հայրը հոգու աչքով տեսանումեմ տանջանարանի մէջ չարչարուելով և երկնային մարդասիրութեան կարեկցութիւնը աղերսելով։ Բարեաւ մնացէք»։

Նա կամեր շտապով դուրս գալ տանից, բայց պարոն Քուրրիերը փակեց նորա ճանապարհը։

«Ո՛նա, թշուառական դու» ասաց նա։ «Ասպարէզ մի կանչեր ճակատագիրը։ Ա՛յժ գուցէ կ'առնուս դու քո հօր վրէժը, բայց անպատուելի թշուառ կը կացուցանես քո եղբայրը»։

«Երբ որ Լուդովիկոսը կը տեղեկանայ բոլոր հանգամանքին», պատասխանեց աղջիկը տաստկութեամբ, «այնու հետև մտածութիւնը թէ կամեր նա զուգաւորութիւն այդ մարդու աղջկայ հետ, կը լցուցանէր նորա սիրտը գծրշութեամբ։ Եթէ այլապէս է, ապա չէ նա արժանի լինելու այնպիսի հօր որդի։ Ո՞վ, իմ հօր հոգին այսօր կը լինի իմ հետ. նա առաջնորդելու է ինձ այսօր, ինչպէս Տիրոջ հրեղէն սիւնը մի ժամանակ առաջնորդում ճանապարհորդներին անապատի մէջ։ Երբ որ այս գիշերիս երկնքի աստղները դուրս կը գան, պիտի նայեն մի պարտուորի վերայ, որին իմ միջնորդութեամբ զարկել էր երկնային արդարութեան բազուկը»։

Նա խլեց իւր անձը ալեւորի ձեռնից և դուրս փախաւ սենեկից։

Մի քանի րոպէ յետոյ գտանվումեր արդէն ճանապարհի վերայ դէպ ի Փարիզ և դէպ ի օթևանը Բուլարդի, ուր գալոց երեկոյին պիտի երևէր Մարկիզ Օրմոնդը։

Բուլարդ տիկինը մի բարձրահասակ, լրիկի պէս չոր ու բարակ կնամարդ աղուէսական երեսով, կիսով չափ ասիապէս, կիսով չափ այն ժամանակի ֆրանսիական ձևով հագնուած, գտանվումեր մենակ իւր տան սենեկի մէջ, ուր սովոր էր լցուցանել իւր կախարդական ասած հմտութիւնքը։ Սենեակը պատած էր սև ասուեղէնով. մէջ տեղում գտանվումեր արիւնագոյն կարմիր վարագոյր ծածկելով մի փոքրիկ երկփեղկեան դուռն, որ բացվումեր դէպ ի մռտակից սենեակները։ Սեղանները նոյնպէս պատած էին կարմիր ծածկոցներով, աթոռքը նոյն գունով ներկած։ Կախարդութեան խորհրդանշանք տեսանելի չէին։ Տիկին Բուլարդը անարժան էր համարում գործ դնել հասարակ աչքակապութիւնը, որ կարող էին զարմացնել ամբոխը միայն։ Շատ սակաւ պատահումէին նորա մօտ ստորին կարգի մարդիկ, որովհետև նա իւր ճարտարութիւնը գործածնելոյ էր կացուցանում բարձր գնով։

«Ո՞ր արդեօք այսքան երկար մնումեր Ֆրանցիսկոսը», քթի տակին կսկսեց Բուլարդը. նա կ'ուզենար ուշադրութեան արժանի տեղեկութիւնք տալու, շահաւէտ նոր լուրեր պատմելու ինձ։ Այսօրեան երեկոն խոստանում ինձ օգտաբեր լինել։ Մարկիզ Օրմոնդը կ'երևի։ Ազնուատոհմ Օրիորդ Քուրրիերը ունի ընդդէմ նորան մի թշնամական խորհուրդ։ Նա խոս-

տացաւ ինձ մի փառաւոր վարձատրութիւն, եթէ օգնական գտանուէի նորան իւր դիտաւորութիւնը լցուցանելու։ Այսօր կը ծանօթանամ ես այս դիտաւորութեանը։ Ո՜հ, մի գեղեցիկ քաղաք է այս Փարիզը։ Ոչ մի տեղ չկան այնքան թեթեւամիտ տխմարներ, ինչքան այս տեղ, մեծատուններուն մէջ։ Մեծամեծքը հետ չհետէ կորուսանումն իւրեանց հաւատը դէպ ի Աստուած, բայց նոյնքան ևս ամուր հաւատումն սատանայի եղբերաւոր մեծութեանը և նոցա, որ կեղծաւորվամբին թէ դաշնաւոր են դժոխքի իշխանի հետ։

Նորա խօսակցութիւնը ինքն իւր հետ ընդհատուեցաւ սպասուած ծառայի գալստով. սա ծանր նիգերով փակելի դռնամուտից ներս մտաւ և մօտեցաւ մարգարէ կնոջը մի երեսով, որ ցուցանումէր աւելի մի խորհրդաւոր բարեկամ, քան թէ մի սոորադրեալ։

«Ես վերադարձել եմ վերջապէս», ասաց նա։ «Ես բերել եմ Ձեզ մի ամբողջ կապոց նոր նոր լուրեր»։

«Եթէ խոհեմ մարդը չէ խնայում ոչինչ աշխատութիւն», ասաց Ֆրանցիսկոսը, «այնուհետև դրեթէ միշտ հասանումէ իւր նպատակին»։

Ռուլարդ տիկինոջ ոսկրաչոր ձեռը շփշփեցրով փայփայելով միջին հասակի մէջ եղած սպասաւորի հաստ ու լիք թուշերը։

«Ինչպէս որ մեծ է քո ջերմեռանդութիւնը ծառայելու ինձ, այդպէս ևս կը լինի քո վարձը», ասաց Ռուլարդ տիկինը։

Ֆրանցիսկոսը խոնարհեցրեց գլուխը։

«Ես գիտեմ Ձեր առատաձեռնութիւնը, պարոն տիկին, և իմ պաշտօնս փոխելու չէի մի պաշտօնի հետ որ և իցէ դքսուհու սպասաւորական սենեկի մէջ։ Թող այս. ինձ սիրելի է լսել ծածուկ բաներ»։

«Ուրեմն բաց արա և դուրս թափիր քո կապոցը, իմ հաւատարիմ դործակատար»։

Մարգարէ կինը դուրս հանեց սեղանի պահարանից մի մեծ գիրք, թաղաք և դրիչ։ Նա նստաւ սեղանի մօտ և ասաց.

«Լսիմ, սկսիր դու, իմ խորամանկ դև»։

Ֆրանցիսկոսը մի փոքրիկ ոսկի տուփից — դա էր իւր իշխանուհի կնոջ պարգևը — առաւ մի փոքր քթախոշի, հանգստացաւ սեղանի մօտ դրած նստարանի վերայ և սկսաւ այսպէս.

«Վիկտ Աքբէն պարոնը, ահա-տորս ամիս է, որ անհաւատարիմ է իւր ամուսնուն։ Նա սիրակցութիւն ունի Օպերայի մէջ կաքաւող մի աղջկայ հետ»։

Լսելս տեղեկութիւնը տիկին Ռուլարդը ծանօթագրեց իւր գրքի մէջ։

«Ու կաքաւող աղջկայ մասին», հարցրեց նա, «ինչ գիտես դու»։

«Դա ևս, պրն նրբահասակ, օդեղէն էակը, Կլաւդիա Բարնաժ, խաբեութեամբ գտնելով իւր սիրողը։ Սէնտ Աքբէնի ծառան, Ժան Տուսէն է աղջկայ բուն սիրողը։ Մի սրտուակ դինիու վերայ նստած, դա հաւատաց ինձ այդ գաղտնիքը։ Ո՜հ, դինին շատ անգամ գարմանալի գործեր է տեսնում»։

Տիկին Բուլարդը ժպտեցաւ։

«Աղաչեմ աղջիկը պիտի իմ մօտ ուղարկէ պարոն Սէնտ Ալբէնը։ Ես կը հաւատացնեմ նորան որ իւր սիրոյն հաւատարմութիւնը մի ապառաժ սար է, որի վերայ կարող է նա ամուր շինել իւր տունը»։

Ֆրանցիսկոսը յառաջ տարաւ խօսքը.

«Ընդունատոհմ աղջիկ քլերմոնտը, մի յիսուն տարիքով պառաւ կնաւմարդ, աչքը ձգել է գնդապետ Բարվիլի վերայ։ Նա փափագումէ վայելելու ամուսնութեան քաղցր ուրախութիւնքը պառաւ պոտագրոսի կողքին»։

«Սրտերի թագուհին պիտի այդ աղջկան դուշակէ գնդապետ Բարվիլի որպիսութիւնքը»։

«Սոմն ֆեվալը սպասումէ իւր անգաւակ հօրեղբօր մահուն, Մարսէլ քաղաքում»։

«Խաղմահմուտ տիկինը կը լցուցանէ իւր պարապքը»։

Ինչ որ Ֆրանցիսկոսը ասել էր, արձանագրուեցաւ գրքի մէջ։

Եւ ահա թակեցին ներսամուտքի դուռը որ իւր հետևից փակել էր հաւատարիմ լրաբերը։

«Մտնել շփոթումէն, տիկին»։

Բուլարդը շուտով թաքցրեց գիրք ու գրիչ ու թանաքը։

«Տէս ապա, թէ ո՛վ էր եկաւորը», ասաց նա։

Ֆրանցիսկոսը դուրս գնաց և մի քանի րոպէից յետոյ վերադարձաւ։

«Մի սև քօղաւորուած կին կամենումէ խօսել Բուլարդ տիկնոջ հետ»։

«Ա՛նանչո՞ւմես նորան»։

«Կարծեմ ըստ որում յառաջուց արդէն տեսել եմ ես նորան այս տեղ»։

«Ընդունատոհմ օրիորդ քուրբիեռը»։

«Լա՛ւ, ամենևին այդպէս»։

«Ես նորա հետ պիտի միայն լինիմ։ Հեռացիր դուռ, իմ որդեակ։ Ո՞վ. այս սև թուշնակի քօղը տակ զրած են ոսկի թևեր»։

«Որոց միջից, ինչպէս խելքի մօտ է, մի քանի ոսկի փետուրներ դուրս կը քարշենք», ասաց քթի տակ Ֆրանչիսկոսը։

Մի արագ ոտիւնով (թուչտուքեամբ) փախաւ ու ծածկուեցաւ նա վարագուրի յետքում։

Բուլարդ տիկինը անձամբ անձին գնաց ներս բերելու սևազգեստ կնաւմարդը։

Դա էր քուրբիեռեան Մարգարիտը։

«Ընդհանով ենք այս տեղ», հարցրեց նա։

Բուլարդը գլխով արեց։

«Իմ տան մէջ», ասաց նա, պատերը չեն համարձակուելու ականջներ ունենալ։

Մարգարիտը յառաջ տարաւ խօսքը.

«Դուք գրել էիք ինձ թէ Մարկիզը այսօր երեկոյին գալու է Ձեր մօտ»։

«Ես սպասումեմ նորան տասներորդ ժամուն»։

Մարգարիտը դուրս հանեց մի ճոխ ոսկով լցրած քսակ իւր հանգերձի գրպանից։

«Ընդունեցէք իմ շնորհակալութիւնս յառաջուց, տիկին»։

Հասակը շուտով կոխուեցաւ մարգարէ կնոջ ձեռի մէջ։

Ղուէսի երեսը ժպտալով ծռմռուեցաւ։

«Մեծատուն օրիորդը է նոյն ինքն վեհանձնութիւնը»։

Մարգարիտը յառաջ տարաւ խօսքը.

«Տասնապատիկ աւելի մեծ վարձ ճնշուի ձեզ, եթէ դուք լռհեւմաւթեամբ և հաւատարմութեամբ օգնական կը լինիք ինձ»։

«Ձեր յոյսը բոլորովին դրեցէք իմ վերայ։ Բայց ինչ պիտի լինի իմ լցուցանելի գործը»։

«Համբերութիւն, տիկին, համբերութիւն»։

Մարգարիտը նայեց իւր ոտից կողմը սենեկի մէջ։ Նորա աչքը ընկաւ կարմիր վարագուրի վերայ։

«Ո՛նչ բան է ծածկում այն տեղ վարագոյրը», հարցրեց նա։

«Մի մութ սենեակ։ Այն տեղ Ձեր խոնարհ աղախինը սովորութիւն ունի գիշերատորութեան իրեւ մարգարէ կին։ Ներսից բացվում մի դուռն դէպ ի այլ սենեակներ»։

«Լաւ է, լաւ»։

Մարգարիտը մօտ գնաց Բուլարդին։

«Լսիր ինձ, տիկին։ Եթէ ես այսօր հասանեմ իմ նպատակիս, դուք էգուց կարող չէք այլ ևս ճնշել փարիզում»։

Ղուէսի երեսը աչքերը մեծ մեծ բացեց։

«Ընչիւ օրիորդ, այդ ինչ պահանջողութիւն է»։

«Տասը հազար — քսան հազար ֆրանկ, եթէ կը լցուցանէք իմ հրամանը»։

Մարգարէ կինը խորհրդածեց։

«Լսա, տիկին, վճռեցէք խնդիրը»։

«Խարի է. ես ընդունումեմ ձեր առաջարկութիւնը», ասաց Բուլարդը մի կարճատև լռութենից յետոյ։

«Դուք կը վերադառնաք այս տեղ երկու տարուց յետոյ միայն, և մինչև այն ժամանակը կ'ապրէք գաւառումը մի այլ անունով»։

«Խորամանկ կինը ժպտեցաւ»։

«Ո՜հ, ես իմ կեանքումս, արդէն կրել եմ զանազան անուններ»։

«Կամիք դուք երդմամբ հաստատել, որ ձեր խոստումը լցուցանելու էիք»։

«Պատրաստ եմ, այն պայմանով, որ ես էգուց կանուխ ստանայի ձեզանից որոշած արծաթը»։

«Ես կ'առնում ձեզ իմ հետ սայլիս մէջ դէպ ի վէնետիկ կալուածը, այն տեղ կը ստանաք ձեր վարձը»։

Ռուլարդը երդում կերաւ։

«Եթէ դուք երդմնազանց կը գտանուիք», ասաց Մարգարիտը, ապա երդվումեմ ձեզ, որ սուտ մարգարէուհին աշխարհի առաջին կը խայտառակեմ»։

Այս պայմանախօսութիւնը աւարտուած, կամեցաւ Ռուլարդը իմանալ թէ Մարգարիտը ինչ դիտաւորութիւնք ունէր ընդդէմ Մարկիզ Օրմընդին։

«Ուրեմն պիտի լինի ձեզ — սկսաւ Քուրբիեր օրիորդը, որ ես —»

Նորա խօսքի յառաջաբանութիւնը արգելուեցաւ մի թունդ ղարկոզութեամբ փակած ներսամուտի դրան։

Ռուլարդը գնաց նայելու թէ ո՛վ էր։

Նախասենեկում գտանվողմէին մանուկ շատ կնամարդեր որոց հագուստից երեւումէր որ մեծատների կարգից էին։ Նորա կամէին, որ Ռուլարդ տիկինը կարտերից մարգարէանայ նոցա։

Որովհետեւ նա չկամէր որ և իցէ շահ ձեռքից թողուլ, շուտով ելաւ դէպ ի Մարգարիտը և խնդրից սորանից, փոքր ինչ միջոց գնալ և ճոխ մի այլ սենեկում։

Մարգարիտը յանձն առաւ։ Գուշակող կինը առաջնորդից նորան մեծ սենեկի միջով դէպ ի տան ներսը, ուր գտանվողմէր իր յարմարապէս պատրաստած սենեակը։

Օրիորդ Քուրբիերը հանդստացաւ այս տեղ մի նստարանի վերայ։ Նորան պիտոյ էր մի քանի ժամ սպասել այս տեղ, մինչեւ վերադարձաւ գուշակող կինը. պատճառ, մանուկ կանայքը հեռանալով, եկած էր մի այլ այցելու թիւն։

Մինչ այս բաները լինումէին, դիշերի ստուերքը պատել էին փարիզի վերայ և հասել էր ժամը, երբ Մարկիզ Օրմընդը խոստացել էր երթալ Ռուլարդի մօտ։

Ժամացոյցը նորա Գամ եկեղեցու աշտարակից զարկից տասն, և ահա մտիշալ Մարկիզի կառքը գադարեցաւ բուսական նեղ փողոցի անկիւնի մօտ, որոյ միւս ծայրումը բնակումէր Ռուլարդը։

Մարկիզը դուրս եկաւ կառքից, հրամայեց իր կառապետին սպասել իր վերադարձին այս տեղ, և ապա ինքը ոտով գնաց այն տեղ, ուր յոյս ունէր տեղեկութիւն ստանալու իր որդու ծածուկ սիրակցութեան մասին։

Ֆրանցիսկոսը կանգնած էր արդէն դրան շէմքումը, սպասելով նորան։ Նա տարաւ նորան վերոյիշեալ մութ սենեակը։

«Շ՝նորհ արէք, մի քանի րոպէ մնալով այս տեղ, ողբմած պարոն» ասաց սպասաւորը։ «Տիկինը իսկոյն կ՝երևի Ձեր առաջև»։

Երբ որ Մարկիզը միայնակ գտանվումէր սևապատ սենեկի մէջ որ աղօտապէս լուսաւորվումէր մի լոկ, առաստաղից կախած կանթեղով, ակամայ զգաց իւր սրտի մէջ մի օտար ու խորթ անհանգստութիւն։ Նորա չորս կողմում տիրումէր մահու հանգարտութիւն և ոչ մի ձայն դուրսից թափանցում չէր այս սենեկի մէջ, որ իւր զարդարանքով աննման չէր մի գերեզմանական վերապի կամ մի ինկվիզիցիօնական սենեկի։ Նա իւր ներքին ահ ու դողին թևթևութիւն տուեց մի կիսաձայն խօսակցութեամբ ինքն իւր հետ.

«Շ՝ատ կը ցանկայի ես» ասումէր նա քթի տակին, «ծանօթանալ այս կնոջ հետ։ Բոլոր աշխարհը ընծայումէ դորան մի զարմանալի մարգարէական զօրութիւն։ Ես երբէք հաւատ ընծայել չեմ այդպիսի հմտութիւններին, և այնու ամենայնիւ հետևել եմ նորա հրաւիրանքին։ Այնպէս է թվում ինձ, որպէս թէ այս տեղ պիտի տեղեկանայի, թէ գալոցքը ինչ էին վճռել իմ կեանքիս մասին, արդեօք իմ հոգու երազները որ իմ զաւակների բաղդաւորութիւնը ոսկեղէն երանգերով պատկերացնումեն ինձ, կատարուելու էին, թէ պիտի ցնդուին (ցիր ու ցան լինին) որպէս շղթիք»։

Մի նայքին դողութեամբ սարսափելով, լուռ ու մունջ մնաց մի քանի րոպէ։ Ապա յառաջ տարաւ խօսքը.

«Կ՝ուզէ իմ կասկածանքս ստուգուի, գուցէ թէ խաղի քուէքը նորա համար միայն խարդախել էի ես, որ մի երկար ապահով խաղից յետոյ ամենը կորուսանեմ—ինչու։ Համար մի անբացատրելի ահ ու դող ըմբռնումէ սիրտս այս սենեկի մէջ։ Ինչու համար յանկարծ թվումէ ինձ, որպէս թէ մի Թշնամի գարան էր գործում այս տեղ, որ իբրև մի վագր մի ժայռակտորի քամակից կարող էր դուրս թռչել և պատառ պատառ ծուատել անպաշտպան ճանապարհորդը»։

Կ՝ա ձեռով շփեց ճակատը, և զգաց դորա վերայ սառն քրտինքի շիթեր։

Կ՝ա փորձ փորձեց քաջալերուելու։

«Յիմար դու» ասաց նա բարձրաձայն. «ինչ խորհուրդ ունի այս կասնացի երկիւղը։ Այն լոկ մտածութիւնը, որպէս թէ քո որդին սիրումէր մի կին, որ կարող էր անպատուել քո անունը, ճնշումէ քո կուրծքը և վաղեցնումէ արիւնը դէպ ի քո սիրտը. միւս այլ պատճառ չկայ այս տեղ։ Ինչ տեղից պիտի երևէր այս տեղ մի Թշնամի։ Թէև լինէր դա»—վերջացրեց խօսքը, հպարտութեամբ վերուղղելով անձը—առիւծը վախում չէ վագրից։ Այլև, ես եկած չեմ այս տեղ անղէն»։

Ընդ ձեռը տարաւ նա դէպ ի թափանչաները որ իւր հանդերձի ծոցի մէջ կրումէր։

Ուրվհետև նա քամակը դարձուցել էր դէպ ի կարմիր վարագուրով ծածկած դուռը, չկարողացաւ նկատել, որ դուռը զգուշութեամբ բացուել էր և մի օտարոտի կերպով հագնուած կանացի անձն կամաց ներս էր մտել։

Յանկարծ զարկեց նորա ականջին մի աղօտ, ցնորական ձայն.

«Խարուել լինի գալուստդ, պարոն Մարկիզ Օրմոնդ»։

Սարսափելով, դարձուց նա երեսը դէպ ի այն կողմ։

Նորա հայեացքը ընկաւ գուշակող կնոջ վերայ, որ տակաւին շատ մօտ կանգնած էր վարագուրին։ Նա տեսանում իւր առաջև մի դեռ ևս մանուկ կին, որոյ թխացած երեսի վերայ վառվռումէին երկու սև աչքեր, որ թափանցելով նայումէին նորա վերայ։

Մարկիզը չդիտէր իւր երկիւղի պատճառը. բայց սկզբումը չկարողացաւ նա տանել գուշակող կնոջ հայեացքին։ Աչքը ցած ձգած, ասաց նա.

«Ես դո՞ւ ես, գուշակող կինը Բուլարդ»։

«Ես, այդ ես եմ», պատասխանեց աղօտահնչիւն ձայնը։

Դա, այդ սիբիլլան տակաւին մանուկ է, կարծումէր Մարկիզը, և ոչ տգեղ։ Ո՛ր սատանան նկարագրել է ինձ այդ կինը ամենևին այլապէս։

Գուշակող կինը կամաց կամաց մի քանի քայլ աւելի մօտեցաւ նորան։

«Ես հրամայել եմ հրաւիրել Ձեզ իմ մօտ, պարոն Մարկիզ Օրմոնդ»։

«Ընդարձակ, տիկին, արդարև, և ես հետևել եմ այդ հրաւիրանքին»։

Այժմ համարձակուեցաւ Մարկիզը դարձեալ ուղղել հայեացքը նորա վերայ։

«Ես երեսի գծագիրքը», ասումէր նորա մէջ մի ձայն, «այս թուխ աչքերը չէիր տեսել դու մի օր քո կեանքի մէջ»։

«Ոչ, ոչ ասումէր քո՛ւի տակ. դու մոլորվումես»։

Նա նա բարձր ձայնով և հաստատութեամբ ասաց.

«Դուք կամիք գուշակել ինձ, տիկին։ Բարի է։ Բայց նախ կը ցանկանայի ես տեսանել մի վորձ, որ երաշխաւոր լինէր ձեր ճարտարութեան ստուգութեանը»։

«Ես այդ վորձը տալիս եմ ամենեցուն», պատասխանեց գուշակող կինը, «որ շնորհ են բերում իմ մօտ, խնդրելով որ նոցա գալոց օրերի վարագոյրը յետ քարշեմ»։

«Ուր ինչ բանի մէջ է այդ վորձը»։

«Ես նոցա առաջև բացումեմ իւրեանց անցած օրերի պատկերը, և այդ բանը փոխումէ շատ անհատ մարդիկ դէպ ի հաւատալորը»։

Մարկիզը յետ քարշուեցաւ մի քայլ։

Գուշակող կինը նկատեց, որ մի գունատութիւն պատեց նորա երեսի վերայ։

«Ո՛նպէս» ասաց նա. «մի՞ թէ մարդերի անցած կեանքի գաղտնիքը յայտնի են Ձեզ»։

«Լա՛, յայտնի են ինձ, պարոն Մարկիզ»։

«Ու՛մ— իմ անցած կեանքի գաղտնիքը»։

«Դուք դեռ ևս տարակո՞յս ունիք։ Մի բառ ձեր բերանից, և ահա կը վերացուի Ձեր տարակոյսը»։

Մարկիզը լուեց մի քանի րոպէ։ Նա մտածումէր, արդեօք պիտո՞յ էր նորան թոյլ տալ այդ կնոջը մի քանի բան իւր անցած գնացած օրերից պատմել նորան։ Եթէ դա գիտէր նորա բոլոր գաղտնիքը, ապա մի թշնամի էր, որ հարկաւորութիւնը հրամայումէր ոչնչացնել։ Բայց այս բանս անկարելի էր։ Ի՛նչպէս պիտի այդ կինը, որոյ երեսից կարելի էր միայն եղրակացնել նորա շառաւիղումը ցիգաննների ցեղից, տեղեկացած լինի այն գաղտնիքին որ կարող էր ինքը միայն գիտել, որովհետև նորա յանցանքի պարտակիցը, տիկին Մենեմնօնը, 1719 թուականին վախճանած էր Սէն Կիր արբայարանում։

Ո՛չ ու դողը զգացումը, որ չկամէր հրաժարուիլ նորանից, մեծ դժուարութեամբ յաղթահարելով, որոշեց փորձել այն կինը որ այնպէս յանդգնաբար պարծենումէր իւր ճարտարութեամբ։

«Խարի՛ է, տիկին, խօսեց Մարկիզը վստահութեան ցոյցով. ասացէք ինձ ինչո՞ւ եղած է, այնուհետև կը հաւատամ Ձեզ լիակատար մտքին։ Շուտով օգնական կոչեցէք Ձեր ոգիքը, Ձեր դևերը»։

«Լա՛ւ հոգին, որ օգնական է ինձ», ասաց գուշակող կինը հանդիսաբար, արդէն անտեսանելի շրջումէ մեր չորս կողմով»։

Մարկիզը բարձրաձայն ծիծաղեց արհամարհաբար։

«Ի՛նչպէս է դևի անունը. բէհղզեբուղ թէ Արուսեակ»։

«Ձկայ այս տեղ ոչինչ դժոխային դև, պարոն Մարկիզ, այլ յաւիտենական հոգին ճշմարտութեան»։

«Հաւանական է այդքան շատախօսութիւն, տիկին։ Դորանով դուք կարող էք փառք ճարել ձեզ համար գլուխների և թեթևահաւատ կանանց և ոչ թէ իմ աչքում։ Դէպ ի գործ, տիկին։ Կամիք դուք կարդալ իմ ձեռի մէջ գրածը։ Ահա ձգումեմ դորան»։

Նա պարզեց ձեռը դէպ ի այն կողմ։

Գուշակող կինը բաց մերժեց նորան իւր կախարդական փոքրիկ փայտիկով։

«Ո՛չ թէ ձեր ձեռի խառնաւինդոր գիծերը», ասաց նա, «այլ Ձեր երեսը է մի հայելի անցած գնացած օրերի»։

Իմ երևոյթ. «Դուք Ձեր արուեստը լցուցանումէք մի առանձին կերպով։ Ուրիմն յառա՛ջ գնացէք։ Վառուա՛ծ եմ հարցասիրութեամբ»։

Մերկլայի թուխ աչքերը այնուհետև բևեռուեցան մի փոքր միջոց Մարկիզի երեսի վերայ։ Ապա բարձրացրեց նա ձեռը և իւր կախարդական փոքրիկ գաւազանով արեց զանազան օտար շարժողութիւններ։ Վերջապէս դէպ ի ցած նայեց իւր առաջև և ասաց բարձրացրած ձայնով.

«Մի ախորժելի վայելուչ ձոր դրած է տեսանողը կնոջ աչքի առաջև. նորա վերայ բարձրից նայումէ մի գեղեցիկ ամրոց։ Մայր մտանող արևը բոցավառ շողշողեցնումէ բարձր դարպասը և Օրսանժի աղգատոհմի նշանը»։

Մարկիզը սկսաւ դողալ։ Նա մեղմով կրկնեց անունս «Օրսանժ»։

Կուշակող կինը, երևումէր, թէ նկատում չէ Մարկիզի խռովութիւնը. նա յառաջ տարաւ խօսքը.

«Իմ աչքս շեղվումէ դէպ ի մի կողմ։ Մի աւերակ, հինօրեայ շինուածից դուրս է գալիս մի տղամարդ։ Նախանձ և ատելութիւն նկարվումեն նորա դունաթափ երեսի վերայ։ Նա ասումէ իւրեան Մարկիզ Օրմօնդ»։

«Վաժոկքը ներշնչել է այս կնոջ մէջ», թոթովեց քթի տակ անունը տուած մարդը։

«Հայակապ ամրոցի դուռները բացվումեն», խօսքը յառաջ տարաւ նուխս երեսով կինը։ «Մի պատուարժան ալևոր երևումէ իմ աչքիս։ Նա խօսումէ դէպ ի ջքաւորը։ Դուռ անըաղդ ես. թող իմ տունս լինի քո տունը, քո զաւակները լինին իմերս»։

Ականկի մէջ լսելի էր մի աղօտ հնչիւն։ Մարկիզը որ ընկղմուել էր մի նստարանի մէջ, վեր թռաւ տեղից։

Կուշակող կնոջ աչքերը կայծակներ էին արձակում իւր հիւրի վրայ։ Նա վազեց ահաբեկուածի վերայ և հարցրեց աղօտ ձայնով.

«Հայժմ պիտոյ էր ինձ յառաջ տանել խօսքս, պարոն Մարկիզ»։

Յուսահատութեան կամակորութիւնը դուրս հանեց նորա շրթունքից այսպիսի պատասխան.

«Այո, յանուն սատանայի, կին դու. մանիր մինչև վերջը քո խաբեբայութեան հիւսուածը։

Կուշակող կինը դարձեալ յետ քարշուեցաւ։ Ափերի և ատելի սաստիկ բարձրացնելով ձայնը, խօսեց նա.

«Այ, վայ. կիջային պատճառ բանտի. մի տանջանարան, ազնիւ Օրսանժը չարչարվումէ դահիճների ձեռքով. նա երդմամբ հաստատումէ իւր անմեղութիւնը, աղերսումէ ողորմութիւն։ Նոյն իսկ դահիճը զղումէ գութ։ Նորա աչքից կաթումէ մի արտասուք ամենավատթար ապերախտութեան, ամենանախատ մատնութեան գլխի վերայ։ Ո՞վ, այդ արտասուքը մի օր այն կեանքումը ատելի պայծառապէս կը փայլի, քան թէ քերոլեի աչքը, թէ պետև մի դահիճ էր, որ թորումէր այդ արտասուքը»։

Վաղարը, որ առաւ սիրիլեան, շունչ քաշելու համար, գործ դրեց պարտաւորը մի հառաչանք արձակելու։ Վերստին սկսաւ խօսել զարհուրելի ձայնը.

«Այն տեղ, այն տեղ ամիսուսած է աքսորական նահատակը մեռանելով ճանապարհի վերայ։ Ես լսումեմ նորա վերջին խօսքերը. Ներիր ինձ, Աստուած իմ, ինչպէս ես ներումեմ իմ թշնամիներին, և նորան իսկ, որ

տեղութեամբ փոխարինել է իմ բարերարութիւնքը։ Նա տալիս է դորա անունը —»

Մարկիզը մի վերաւորուած վագրի ոստիւնով վեր է թռչում։

«Լուռ կաց, չարագուշակ դու, լուռ կաց»։

Այս սպառնալիքը անտես արուեցաւ։

«Նա տալիս է Օրմօնդի անունը», աղաղակեց տեսանող կինը։

«Խելագարութիւն, ստութիւն», բացագանչեց Մարկիզը գրեթէ խեղդուած ձայնով և բարձրացրեց կծկած ձեռը, որպէս թէ կամէր խօսող կինը դէպ ի գետին զարկել։

Նայց սա, այս խռովութեամբ երևումէր յեղափոխուած մի կատաղի կին։ Առաւել և առաւել բորբոքուելով և բարկանալով իրրև մի տեսանող կին վաղ ժամանակների, որ անիծումէր իւր ժողովրդի թշնամիքը, ձայն տուեց նա.

«Խելագարութիւն. բայց ձեր լեզուն կակազումէ. — Ստութիւն. բայց Ձեր երեսի վերայ նստած է զարհուրանք։ Այո՛ այն աղնիւ Նահատակ Օրսանժը ներել է, բայց յաւիտեան արդար դատաւորը ներում չէ։ Նորա աթոռից ցած է իջել վրէժխնդիր հրեշտակը, պատուհասելու պարտաւորը։ Ո՛վ դու, պլանդակուած կերպարանքով և գունաթափ երեսով մարդ, քո վերջը հեռի չէ այլ ևս։ Ցառաջ քան թէ տարին կը բոլորէ իւր շրջանը, ամպերի վերևում բնակող դատաւորին պատասխանատու կը լինիս քո կեանքի չարագործութիւնների մասին։ Պահիր մտքումդ Նյեմբերի տասերկուսը — այդ օրին աղնիւ Օրսանժը դուրս փչեց հոգին։ Դու, դու՛ ես նորա սպանողը։ Երբ որ կը հասանէ այդ օրը, քո հոգիդ արդէն մատնած էր տարտարոսի պետութիւններին, յաւիտեանս յաւիտենից տանջուելու համար»։

Մարկիզը ձեռը կոխեց ծոցի մէջ, որոնելով իւր թաւիանչան։

«Ընծեա՛լ դու, ես կը սպանեմ — կը սպանեմ քեզ» կակազեց Մարկիզը։

«Պահի՛ր քեզ ինքնդ», ձայն արձակեց տեսանող կինը ամենասաստիկ բարկութեամբ, «այնուհետև կ'ազատուիս դու մի ծանրընթաց, բազմաչարչար մահու տապնապից։ Դու անիծուած ես Աստուծուց։ Ցուսահատուիր, հալումաշ եղիր և մեռիր։ Ամէն, ամէն։ Մարգարէ կինը գուշակել է քեզ այս բանս»։

Նա սպառնալից դէմքով մնաց կանգնած Մարկիզի առաջև, աչքը և այլ ձեռը դէպ ի երկինք ուղղած։

Յանցաւորը ժողովեց իւր վերջին ոյժը և զօրութիւնը։

Նա դուրս քարշեց թաւիանչան և կամէր ուղղել Հարուածը գուշակող կնոջ վերայ։ Բայց նորա ձեռը այնպէս սաստիկ դողաց, որ թաւիանչան, մինչև կարող էր մի ամուր ուղղութիւն ստանալ, կրակուեցաւ յանկարծ։ Տունը շարժուեցաւ դղրդիւնից, սենեակը լցուեցաւ ծխով։

Մարկիզը սլաի նուաղութենից գլորուել էր դէպ ի գետին։

Տեսանող կինը իսկոյն անյայտացաւ մութ սենեկի կարմիր վարագուրի քամակում։

Կէս ժամ յետոյ, երկու մարդ, երեսները թանձր վերարկուով պատած, դուրս են տանում ուշաբարձուածին դէպ ի իւր կառքը, որ փողոցի անկիւնում սպասում էր նորան։

«Մէկը, քո պարոնը անշնչացած գտել ենք փողոցումը», դիմակաւորներից մինը ասաց կառապետին։ «Շուտով հասցրու նորան տուն։ Մեռած չէ նա, այլ ուշաբարձուած միայն. բժիշկը շուտով գարձեալ կ'առողջացնէ նորան։

Ընկաբեկուած կառապետը մոռակեց ձիանքը և քշեց դէպ ի Օրմօնդի ապարանքը, ուր բաց ի սենեկային սպասաւորից, որ սպասում էր իւր պարոնին, ամենևքեան արդէն քնած էին խոր քնով։

Մարկիզը հանգստացրեցին մահճի մէջ։ Սենեկային ծառան իսկոյն զարթեցրեց ծառաներից մինին։ Սա վազելվազ գնաց բերելու Մարկիզի առտնին բժիշկը, Բենօ անուն, որ բնակումէր Հարիւր քայլափոխ հեռաւորութեամբ Օրմօնդի ապարանքից։

ԳՕԴՈՒՆՅ ԵՕԹՆԵՐՈՐԴ.

ԽՊՃԻ ՏԱՆՋԱՆՔԸ.

Ֆելիսիտէ Օրմօնդը այն օրին, երբ նորա հայրը երեկոյին գնացել էր տիկին Բուլարդի մօտ, յանձն էր առել մի զբօսանք կառքով, Մարկիզի բարեկամ գերդաստանի հետ, փարիզի շրջակայքում։ Նա 9 ժամուն վերադարձել էր դէպ ի տուն, մի փոքր յետոյ առանձնացել էր իւր ննջարանի մէջ և, վաստակած լինելով ցերեկի ձիընթացութենից, ամուր քնել էր մինչև առաւօտու լոյսը։ Ինչ որ տան մէջ գիշերին պատահել էր, անյայտ էր մնացել թէ նորան և թէ նորա սպասաւոր կնոջը։ Սա քնած էր նորա մօտակայքում և բաւական հեռի այն սենեակներից, որոց մէջ բնակումէր պարոն Օրմօնդը։

Ֆելիսիտէն ութ ժամուն վեր կացաւ մահճից, հագաւ մի թեթև առաւօտեան զգեստ և գնաց ապա, ինչպէս սովորութիւն ունէր, առաւօտեան օդցինը մատուցանելու իւր հօրը։

Երբ որ նախասենեկի դուռը կամեր բանալ, բժիշկ Բենօն հանդիպեցաւ նորան։

Նա կանգնեցաւ Ֆելիսիտէի առաջև և չթողեց նորան ներս մտանել։

Մանուկ աղջիկը ահաբեկուած նայումէր բժշկի վերայ։

«Պարոն բժիշկ Բենօ. Դուք այս տեղ», հարցրեց նա երկիւղալից։ Ինչ է պատահել։

«Ա՛յս դիշեր մարդ էին ուղարկել իմ հետևիցդ, որ գամ, պատուելի Օրիորդ», եղաւ պատասխանը։

«Լաւ՛ին օգնելու, պարոն դօքտօր, ուա՛յն»։

«Ի՛նչպէս — Դուք չգիտէ՞ք դեռ ևս —»

«Ի սէր Աստուծոյ, ասացէք ինձ», ձայն արձակեց Ֆելիսիտէն։

«Պարոն Մարկիզը յանկարծ հիւանդացել է»։

Ֆելիսիտէն գունաթափուեցաւ և սկսաւ դողալ։

«Իմ հայրս հիւանդացե՞լ է»։

«Ա՛յո, իմ աղնիւ օրիորդ։ Շուտով ըմբռնել է նորան ցաւը։ Երբ որ ես մտեցայ նորա մահճին, գտայ նորան ցնորուած մի տենդի ջերմութեան մէջ»։

Մի հեղեղ արտասուքի թաւուեցաւ ծնողասէր աղջկայ աչքից։

«Իմ հայրս հիւանդ է, իմ սիրելի հա՛յրս։ Ո՛վ, ասացէք ինձ պարոն դօքտօր, վտա՞նգ կայ»։

Լռիկիկը փորձ փորձեց հանգստացնելու նորան։

«Ձկարծեմ», ասաց նա։ «Երբ որ վերահասու էի նորա ցաւի պատճառին, այնուհետև կարող էի արդէն հնարք գտանել հալածելու նորան»։

«Ո՞նչ կարող էր պատահած լինել, որ իմ հայրս այդպէս յանկարծ— երբ որ ես երէկ կանուխ, կոմնուհի Գրիշոյի հետ, ուղևորվումէի դէպ ի ագարակը և յառաջուց հրաժարական ողջոյն տուեցի նորան, նա ողջ և առողջ էր»։

«Որ և իցէ սաստիկ խռովութիւն սրտի, մի զարհուրեցուցիչ անցք պիտի պատահած լինի նորան», կարծումէր բժիշկը։

«Ի՞նչպէս. չհարցրեցի՞ք նորան այդ մասին, պարոն դօքտօր»։

«Ի հարկէ։ Բայց նա ոչինչ պատասխան չտուեց իմ հարցմանը»։

«Ներումեմ Ձեզանից, թողէք ինձ դիմել նորա մօտ», ասաց աղջիկը»։

«Ա՛յս րոպէիս կարող չեմ թոյլ տալ», պատասխանեց Լինօն։ Երբ որ պարոն Մարկիզը այսօր կանուխ ուշքի եկաւ, իւր որդին կանչել տուեց։ Նա հրամայեց ինձ իւրեան միայն թողուլ Ձեր եղբօր հետ, մնալ ինձ նախանձնեկու մ և զգուշանալ, որ նոցա խօսակցութիւնը միմեանց հետ չարգելուի»

«Ա՛ստուա՛ծ իմ, ի՛նչ գաղտնիք գտանվումէ այս տեղ»։

«Վաղեկ կամի պարոն Մարկիզը իւր որդուն միայն յայտնել իւր յանկարծ յառաջացած հիւանդութեան պատճառը»։

Մանուկ աղջիկը ազատ ընթացք տուեց իւր արտասուքին։ Մի անպատմելի ահ ու դող ըմբռնեց նորան, մնուածելով թէ իւր ջերմութեամբ ու մեղրմութեամբ սիրած հօր կեանքը կարող էր վտանգի մէջ լինել։ Նա վեր կալաւ բժշկի երկու ձեռքը և աղերսեց.

«Ո՜հ, պարոն դօքտօր, ես ընծայումեմ Ձեզ իմ բոլոր գոհարները, բոլորը ինչ որ ունիմ ես. պահպանեցէք միայն իմ սիրալից հօր կեանքը»։

«Ներս տեղ հարկաւոր չէ ոչ ձեր ինդիրը և ոչ մի այդպիսի խոստում», պատասխանեց բժիշկը, հաղիւ թէ կարողանալով զսպել մի թեթեւ ժպտում։ «Ես կը լցուցանեմ, ինչ որ դիտութիւնը և իմ պարտականութիւնս հրամայումեն ինձ»։

Ներս խօսքերը բժշկի բերանից արտաբերուած, իսկոյն բացուեցաւ նախասենեկի դուռը և դուրս նկաւ Գուստաֆը։

Ֆելիսիտէն թռաւ նորան հանդէպ։

«Ո՛ւր եղբայր, իմ սիրելի եղբայր»։

Գուստաֆը գրկախառնեց նորան և ասաց ապա Բենջին. «պատուելի դօքտօր, գնացէք հօրս մօտ. նա միայն է»։

Բժիշկը հեռացաւ շուտով։

Ֆելիսիտէն ահաբեկուած նայեց եղբօր վերայ։ Նորա կերպարանքը գունատ էր։ Նորա աչքերում շողշողումէին արտասուք։

«Ո՜վ, վտանգը աւելի մեծ է, քան թէ բժիշկը ասումէր», ձայն տուեց աղջիկը. «Քո կերպարանքը քարոզումէ ինձ այդ բանը։ Բայց, ասա՛ ինձ, ինչ դիպուածով մեր հայրը այդպէս յանկարծ հիւանդացել է»։

«Նորա հիւանդութիւնը չէ գոյացել մարմնաւոր, այլ հոգեկան պատճառից» պատասխանեց Գուստաֆը։ Թէ ինչ բան այդ ուժեղ տղամարդը այդպէս շուտով և սաստիկ ձգել է ոտքից, տակաւին գաղտնիք է իմ համար։ Բայց հայս ունիմ շուտով վերահասու լինելու այդ բանին, այնուհետև բժիշկ Բենջի հետ միասին կը գտանենք հալածելու այն ահագուժիչ առաջնորդները որ տագնապեցնումեն նորա հոգին»։

Ֆելիսիտէն անթարթ աչքով նայեց նորա վերայ։

«Ո՛նչ առաջնորդներ», Գուստաֆ։

Երիտասարդը կամեր պատասխան տալ, բայց բժշկի աղաղակը, որ օգնութիւն էր խնդրում, լսուելով հիւանդի սենեկից, արգելք եղաւ։

Գուստաֆը շրջեց երեսը Ֆելիսիտէից և հետևեցաւ ձայնին։

Տագնապը զօրութիւն տուեց մանուկ աղջկան հետևելու եղբօրը։

Ո՛նչ տեսարան պատկերացաւ նորա աչքին, երբ որ աղջիկը ներս մտաւ հօր սենեակը։

Մարկիզը, որ գիշերային հանդերձով դուրս էր թռել անկողնից, պատերազմումէր բժշկի հետ, կերկերաձայն աղաղակելով.

«Թողէք ինձ դուրս, թողէք ինձ դուրս։ Այդ զարհուրելի կինը կամենում սպանել ինձ. դա քարշում սուրը կուրծքիս վերայ, այդ անիծեալը։ Ես պիտի փախչեմ դորանից. ինձ պէտք չէ դեռ ևս մեռանել. պատճառ, երեխայք ունիմ ես. սորանց պիտի պաշտպանեմ այդ կնոջ կատաղութենից. դա կամենում և իմ երեխայքս սպանել — սորանց ևս. այդպէս երդուել է»։

Վռւստաֆը կամէր օգնական լինել բժշկին, իւր հայրը վերստին յետ բարշելու և տանելու դէպ ի անկողին: Բայց տենդը, ասես թէ, գերմարդկային ոյժ ու զօրութիւն էր տուել հիւանդին: Սա իւրեանից բաց նետեց երկուսին ևս և յարձակուեցաւ դէպ ի դուռը:

Այդ տեղ հասաւ նորա ականջին մի սրտաբեկ ձայն.

«Հայր իմ, անբաղդ, սիրելի հայր իմ»:

Այս խօսքերը դուրս էր թողել Ֆելիսիտէն:

Վոցա մէջ ասես թէ դրած էր մի կախարդական զօրութիւն. պատճառ, երբ որ կատաղածը լսեց նորանց, դադար առաւ յանկարծ, որպէս թէ կապուելով, և տարածեց ձեռքը դէպ ի իւր զաւակը:

Սա ձգեց իւր անձը հօր կուրծքի վերայ, գրկախառնեց նորան բազուկներով և ձայն տուեց.

«Հայր, սիրելի հայր. տես ահա, ես եմ, քո դուստր Ֆելիսիտէն. մի թէ ճանաչում չես ինձ»:

«Ֆելիսիտէ՞», հառաչեց նա, «իմ զաւակ, իմ սիրելի զաւակ»:

Յոժոռ արտասուք թափուեցան նորա աչքերից և թաց արեցին աղջկայ գլուխը որ կախուած էր նորա կուրծքի վերայ:

«Փառք Աստուծոյ, տենդի ըմբռնումը անցաւ» շշնջեց բժիշկը Վռւստաֆի ականջին: Թող այժմ հոգաբարձու լինինք յետ տանելու նորան դէպ ի իւր մահիճը»:

Վռւստաֆը մօտ գնաց հօրը:

«Պատուական հայր, չկամիք հանգստանալ»:

Ներիտասարդը տուեց նորան ձեռը, որ առաջնորդէ նորան դէպ ի մահիճը:

Բայց հիւանդը բաց մերժեց նորա ձեռը:

«Վռւ, դու, Ֆելիսիտէ, պիտի առաջնորդես ինձ», ասաց հայրը հեզութեամբ: «Դու ես իմ պահապան հոգին, իմ բարի հրեշտակը: Քանի որ դու իմ մօտ ես, տեսանում չեմ այն զարհուրելի կինը»:

Աղջկայ շրթունքի վերայ կախուած էր մի հարցումն. բայց նա, բժշկի ծածուկ ակնարկութեամբ, յետ պահեց այդ հարցումը:

Մարկիզը իւր աղջկայ օգնութեամբ կաղ ի կաղ վերադարձաւ դէպ ի մահիճը և հանգստացաւ:

«Այդպէս», ասաց հիւանդը: «Այժմ նստիր դու մօտս: Երբ որ այն զարհուրելի կինը կամէր ներս մտանել և կը տեսանէ քեզ, այնուհետև չէր համարձակուելու: Ուր գտանելումն հրեշտակները, այն տեղից փախչումն դժոխքի դևերը: Այս պատճառով մնա դու իմ մօտ, իմ զաւակ, մի հեռացիր ինձանից»:

Ֆելիսիտէն տեղաւորուել էր հօր մահճի մօտ. սորա տենդոտ ձեռը պինդ բռնած ունէր իւր ի մէջ աղջկայ ձեռը:

Ձախ ձեռը որ աղատ էր, դրեց աղջիկը հօր ճակատի վերայ, հիւանդի խնդրելով։

«Ո՛հ, սրտի դիւր է այս», ասաց հայրը։ «Քո ձեռը իրրև մեղմացուցիչ բալասան հովացնում է այս կրակը որ բորբոքվում է այս տեղ, և ես այլ ևս չեմ տեսանում ոչինչ առաչօք պատկերներ»։

Դուստրը երկար ժամանակ մնաց այսպէս նստած։ Ցիրուցան նորա ներկայութիւնը երևումէր թեթևութիւն բերող հօր հիւանդութեանը. պատճառ, նորա աչքը այլ ևս նայում էր այնպէս վայրենի կերպով և նորա երակները զարկում չէին այնպէս սաստիկ։

Ֆիզիկ Բենօն մօտեցաւ հիւանդի մահճին և մատուց նորան մի ըմպելի դեղ։

«Ո՞ր նորհակալ եմ ձեզ, դօքտօր» ասաց նա։ «Ձեր դիտաւորութիւնը բարի է, թէև կարող չէիք ինձ օգնել»։

Խակոյն սորանից յետոյ խնդրեց բժիշկից և Գուստաֆից, որ նորան թողուն իւր աղջկայ հետ առանձին։

Ֆիզիկ Բենօն և Գուստաֆը հոգածութեամբ նայումէին միմեանց վերայ։ Հիւանդը նկատեց այս բանը։

«Մի՛ վախեցէք», ասաց նա։ «Քանի որ այս անմեղ երեխան մօտումն է, կախարդ կինը համարձակուելու չէ ոտք կոխել այս շէնքի վերայ։ Եւ եթէ չտեսանեմ նորան, կը լինեմ ես հեզ իրրև գառն։ Գնացէք, դօքտօր, գնա դու, իմ որդի, ես ունիմ իմ աղջկանը մի գաղտնիք հաւատալու»։

«Կուզէ Ձեր քոյրը վերահասու կը լինի այն բանին, որ հիւանդը ծածկել է մեզանից» շշնջեց բժիշկը որդու ականջին։ «Թող լցուցանենք նորա կամքը։ Մեք կը մնանք նորա մօտակայքում. եթէ դարձեալ ըմբռնէ նորան տենդը, օգնութիւն կը մատուցանենք նորան»։

Գուստաֆը մօտեցաւ հօր մահճին, գրկախառնեց նորան, և ապա բժշկի հետ միասին հեռացաւ սենեկից։

Ընդհետև հայր ու դուստր միայն էին։

Աղջկայ օգնութեամբ հայրը կամաց կամաց բարձրացաւ և նստաւ մահճի մէջ։

«Սիրո՞ւմես դու ինձ, Ֆելիսիտէ, սիրո՞ւմես դու ինձ ճշմարտապէս», հարցրեց նա դողդուն ձայնով։

«Աւելի քան թէ իմ կեանքս», պատասխանեց նա, շրթունքը սեղմելով նորա ձեռի վերայ։

«Խարի է այդ, իմ զաւակ, բարի է», ասաց հայրը։ «Ուրեմն, երբ որ ես մեռանելու էի, սիրոյ ձեռը կը փակէ աչքերս»։

«Ո՛հ, մեռանելու վերայ մի խօսիք, պատուական հայր իմ», աղաչելով ասաց դուստրը»։ Աստուած ողորմած է։ Դուք տակաւին շատ ու շատ տարիք կ'ապրէք ձեր զաւակների մէջ»։

Մարկիզը տրտմութեամբ շարժեց գլուխը։

«Ո՛չ ո՛չ իմ զաւակ, այսուհետեւ երկար ոչ, երկար ոչ»։

«Իմ հայր»։

«Տակաւին յառաջ քան թէ գալու էր Սեպտեմբերի տասերկուսը — այնուհետեւ — այնուհետեւ ես —»

«Ի՛նչ, սիրելի հայր»։

«Ընդհանուհետեւ դու չես նստելու իմ կողքումս, այնուհետեւ լսելու չեմ քո ձայնը, չեմ ղգալու քո երեխայական սիրոյ համբոյրը. անշնչացած, սառն դրած կը լինիմ դագաղի մէջ քո լուսահոգի մօր մօտ»։

Ֆելիսիտէն արտասուեց։

«Տէնդի ջերմութիւնն է, հայր իմ, որ ազդումէ ձեր մէջ այդպիսի տրտում մտածութիւնք»։

«Ո՛չ, ոչ, իմ զաւակ։ Այդ ինչ ասել է ինձ»։

«Ո՛ր կինը, իմ հայր, ուր»։

«Նա, որ դժոխքից ուղարկուեցաւ դէպ ի երկիր, թշուառութիւն պատրաստելու ինձ»։

«Ես հասկանում չեմ Ձեզ, հայր իմ։ Որո՞յ վերայ էք խօսում դուք»։

Մարկիզը մի քանի րոպէ յետ ձգեց պատասխանը։

Ապա յառաջ տարաւ խօսքը.

«Ես կարող չեմ այդ բանը ասել քեզ, իմ զաւակ, կարող չեմ։ Բայց հաւաստի է, որ կենդանի մնալու չեմ մինչև այս տարու վերջը։ Բայց յառաջ քան թէ կը մեռանիմ, ցանկանում եմ իմ զաւակներս բաղդաւոր տեսանել։ Դու կ'ամուսնանաս երիտասարդ Քուրբիերի հետ, և Գուստաֆը — ես կամէի նորան ընդդէմ իւր կամքին միաւորել կոմնուհի Բոհանի հետ։ Այս խիստ բան էր, շատ խիստ բան իմ կողմից, որովհետև նա խոստովանեց ինձ, թէ սիրուհի մի այլ աղջիկ։ Թո՛ղ նա ծանօթացնէ ինձ իւր սրտի ընտրածի հետ։ Ես կամիմ օրհնել նորա սէրը, ինչպէս քոնը։ Այնուհետև կ'աղօթէք դուք իմ համար, ջերմ և եռանդուն սրտով կ'աղօթէք, որ Աստուած չդատէ ինձ շատ խիստ դատաստանով, և անէծքը իմ վերայ գուցէ կատարուէլու էր կիսով չափ։

«Ես կամիմ աղօթել, որ Աստուած վերստին առողջացնէ Ձեզ», ասաց Ֆելիսիտէն։ Մի այլ աղօթք հարկաւոր է. պատճառ, հաւաստի է, որ Դուք ոչ մի մարդու երկրիս վերայ չնասել էք»։

Երբ որ աղջիկը այս խօսքերը ասել էր, ծունր խոնարհեցրեց մահճի մօտ, և մի ջերմեռանդ աղօթք դուրս եկաւ անմեղութեան շրթունքից։

Երկնքի տէրը, որ հաճութեամբ լսումէ այդպիսի աղօթքի, գթառատ ողորմութեամբ ցած թողեց մի կարճատև նիւթ յանցաւորի վերայ, որպ հոգին մարգարէ հնոլ անէծքը լցուցել էր ահ ու դողով և խղճի խայթերով։

Ֆելիսիտէն տեղից բարձրացած, տեսաւ, որ հօր աչքերը փակուած էին։ Նա ականջը դրեց հօր կուրծքի վերայ. սա հանգիստ շնչումէր ննջողութեան մէջ։

Աղջիկը ոտի մատերի վերայ սողաց դէպ ի դուռը, բացեց նորան կա-մաց և նշանագի արեց եղբօրը, որ ներս մտանէ։

«Պ՛ար հայրը քնած է» շշնջեց նա։ Արի նստենք այն տեղ անկիւ-նում։ Ես ունիմ քեզ մի բան ասելու։

Երկոքին հեռացան հօր մահճից, որչափ թոյլ էր տալիս սենեկի տա-րածութիւնը։ Այնուհետև Ֆելիսիտէն պատմեց եղբօրը այն խօսակցութիւնը որ ունեցել էր հօր հետ։

«Կ՛ևա հաւան է քո սիրոյն, որպէս իմիս», ասաց քոյրը։ Ո՜վ, նա այնքան բարի է և կամի մեզ բաղդաւոր տեսանել։ Աստուած շուտով կը պարգևէ նորան առողջութիւն։ Այն ժամանակ ուրախութիւնը կը վերա-դառնայ մեր մօտ»։

Ծերպէտ Գուստաֆը մի քանի օր յառաջ տեղեկացել էր, որ մի մա-նուկ երիտասարդ գրաւել էր իւր քուեր անմեղ սիրտը, բայց տակաւին լսել չէր նորա անունը։ Պատճառ, Մարկիզը պատուիրել էր իւր աղջկան, որ ոչ ում, և ոչ իսկ իւր եղբօրը պատմէ իւր սէրը, մինչև ալևոր պարոն Քուրբիները օրինաւոր կերպով խնդրած էր նորանից Ֆելիսիտէի հարսնութիւնը։

Ա՛յս պատճառով ասաց Գուստաֆը.

«Գիտեմ ես, բարի Ֆելիսիտէ, որ դու սիրումես. բայց դու մինչև այ-սօր ասել չես ինձ, թէ ո՛վ էր քո սրտի ընտրածը»։

Աղջիկը մտածեց իւր մէջ. կարճ միջոցից յետոյ ասաց նա.

«Կարծեմ որ այժմ կարող էի ասել Ձեզ նորա անունը»։

«Յանկալի էր ինձ իմանալ պդ, սիրելի՛ քոյր»։

«Կ՛ևա ասումէ դորա անունը. Լուդովիկոս Քուրբիեր»։

Գուստաֆը հիացած, յետ քարշուեցաւ։

«Ազդեօք ուղիղ էր լսածս»։

«Ընտարակոյս, սիրելի Գուստաֆ»։

«Լուդովիկոս Քուրբիեռ»։

«Այո՛, այդպէս է նորա անունը և տոհմանունը»։

«Կ՛ևորա հայրը բնակումէ մի ամրոցում Վէնսեննի մօտ։»

«Մենևին այդպէս։ Ճանաչումես նորան»։

«Այո՛, քոյր իմ։ Ես ծանօթ եմ հօրը, որդուն, այլև աղջկան»։

«Աղջկայ անունը Մարգարիտ է. պատմումէն, որ սա շատ գեղեցիկ է»։

«Կ՛ևա ունի իւր նմանը շատ սակաւ երկրիս վերայ։ Ո՜վ, իմ Աստ-ուած, այս ինչ զարմանալի ճակատագիրէ»։

«Ընդէր այդպէս, Գուստաֆ»։

«Դու սիրումես պարոն Քուրբիերին, և ևս—»

«Ո՛նչ կամի ասել, և Դո՛ւ»։

Գուստաֆը յետ պահեց կուրծքի մէջ այն խօսքը, որ կամէր նա ար-տաբերել։ Այս րոպէին պատկերացաւ նորա հոգու առաջև իւր վերջին խօ-

սակցութիւնը Մարգարիտ Քուրքիերի հետ, որ պատահել էր մատուռում։ Եթէ, ինչպէս կասկածումէր նա, թէև չկամէր հաւատալ, իւր Հայրն էր եւ՝ ղած Օրսանժեան գերդաստանի ձախորդութեան պատճառը, այնուհետև յոյս չկար, թէ Մարգարիտը իմանալով, որ նա մի սաստիկ ատելի էր որդի էր, կը կամենար երբէք Հարսնանալ Նորան, և նոյնպէս իսկ անյուսանալի էր մի ամուսնական կապակցութիւն Ֆելիսիտէի և պարոն Քուրքիերի մէջ։

Նորա Հայեացքը պղտորուել էին, Նորա գլուխը խոնարհուած էր կուրծքի վերայ։

Ֆելիսիտէն ըմբռնեց Նորա ձեռը։

«Դու յանկարծ դարձել ես այդպէս տրտում, սիրելի՛ Գուստաֆ»։

Նա չկարողացաւ իւր սրտի փոփոխութեան ճշմարիտ պատճառը ասել Նորան։ Նայելով հիւանդի վերայ, պատասխանեց նա.

«Ես մտածումէի մեր Հօր վերայ։ Մինչև որ նա չէ առողջացել վերըստին, չունիմ համարձակութիւն տեղիք տալ մտածութեան իմ սիրոյ վերայ։ Եւ դու Ֆելիսիտէ—եթէ երիտասարդ Քուրքիերը երևելու էր մեր ապարանքում—չունիս համարձակութիւն ընդունելու Նորան»։

Ֆելիսիտէն զարմացած նայումէր Նորա վերայ։

«Ընդէր ո՛չ, սիրելի եղբայր։ Ո՞չ ապաքէն ես սիրումեմ Նորան, սիրելի եմ Նորան, և մեր Հայրը հաւան է իմ սիրոյն»։

«Այնու ամենայնիւ պիտոյ է քեզ կատարել իմ խնդիրը, աղնիւ քոյր իմ», ասաց Գուստաֆը ծանրաբարոյ կերպով։ «Հաւատա՛ ինձ, որ ես քո սիրտը ձգելու չէի տանջանքի մէջ, եթէ չունենայի ծանր և մեծակշիռ պատճառներ այդ մասին։ Մի բան միայն կարող եմ քեզ այժմ ասել. Լուդովիկոս Քուրքիեր չէ ճշմարիտ անունը այն երիտասարդի, որ սիրումէ քեզ, և պարոն Քուրքիերն է միայն Նորա և իւր քոյեր Մարգարիտի Հայրագիրը։ Նոցա օրինաւոր ծնողքը շատ տարիներ յառաջ մեռած են։ Մեր Հայրը մի ժամանակ ծանօթ է եղած նոցա»։

«Այդ բոլորը ոչինչ արգելք չէ տակաւին», յառաջ բերեց Ֆելիսիտէն»։

«Այդ կը բացայայտուի գալոց օրերում։ Այս տեղ կայ մի գաղտնիք որ ես տակաւին կարող չեմ մերկացնել քո առաջև»։

«Երբ վերահասու կը լինիմ այդ բանին»։

Գուստաֆը չկամէր պատասխանել այդ հարցմանը, և ասաց.

«Կտրենք այս խօսակցութեան թելը։ Այժմ մտածենք միայն մեր հիւանդ Հօր վերայ։ Երբ որ վերստին առողջացած էր, այնուհետև կը վարուիմ ես, իմ ու քո անունով, ինչպէս կը հրամայեն ինձ պարտականութիւն ու պատիւ։ Այժմ տուր ինձ ձեռդ և խոստացիր, որ դու չկամիր տեսանել Լուդովիկոս Քուրքիերը, մինչև ես թոյլ չտայի քեզ։

Ֆելիսիտէն ծանրաշարժ և տխրադէմ տուեց Նորան ձեռը. ապա գլուխը դրեց Նորա կուրծքի վերայ, արտասուելով։

Տէնդոտ կացուցիչները Մարկիզի չհաւնեց ուղի օրից աւելի։ Փրկաւէտ դեղերը բժշկի և հոգաբարձուհիները իւր զաւակների, որ այն միջոցին միայն հեռանում էին հօր մահճից, երբ որ վաստակած լինելիքը պահանջում էր իւր հարկը, մինչև այն չափ թեթևացուցին հիւանդութիւնը, որ նա կարող էր արդէն թողուլ մահիճը և ֆելիսիտէի կամ Գուստաֆի օգնականութեամբ վեր ի վայր մանգալ սենեակների մէջ։ Բայց ինչ որ նորան ճնացել էր իւր հիւանդութենից, էր մի անդադար ներքին տագնապ, մի երկիւղ, գուցէ գուշակող կինը յանկարծ երևելու էր նորան և կրկնելու այն անէծքը որ նորա կենսական զօրութիւնը չէք էր դարձուցել և այն զօրեղ մարդը մի քանի օրի մէջ շինել էր մի խախուտ ալևոր։ Ամէն նորա հոգու մէջ արմատ էր արձակել այն մտածութիւնը, թէ անէծքը կատարուելու էր և նա տակաւին Նոյեմբերի տասերկուսից — անբաղդ Օրսանժի մահուան օրից — յառաջ կը տեսանէ իւր վախճանի մօտենալը։ Զուր և անօգուտ եղաւ Ֆելիսիտէի խընդիրը հաւատալու նորան այն անցքը, որ անցել էր այն երեկոյին, երբ նա ուշաբարձուած բերուեցաւ դէպ ի ապարանքը։ Մարկիզը ոչինչ չյայտնեց նորան. նոյնպէս յօժար չէր նա այդ զարհուրելի գաղտնիքը յայտնել իւր որդուն։ Ինչպէս նորա արտաքին կերպարանքը, նոյնպէս փոխուել էր նորա սիրտը։ Ցառաջուց երբէք մտածել չէր կարօտութիւնը, որ այն միջոցին ժողովրդի աղքատ կարգերի մէջ թագաւորում էր։ Ամէնուհետև նա տալիս էր առատաձեռնութեամբ, և նորա ծառայքը պատուէր ստացան նորանից ոչ մի չքաւոր, որ օգնութիւն էր խնդրում նորա դրան առաջև, առանց ճոխ տուրքի ճանապարհ ձգել։ Եթէ նա մինչև այն օրը խօսել էր իւր սպասաւորների հետ սառնութեամբ և հրամայողաբար, այնուհետև տալիս էր նոցա իւր հրամանները հեզ, գրեթէ աղաչական ոճով։ Բոհանի ազգատոհմի հետ կըտրել էր ամենայն հաղորդակցութիւն։ Այս պատճառով ամենայն օր հարցանում էր իւր դուստրից. Ինչու երիտասարդ Քուրքիերը չէ՞ պյլ ևս երևում իմ ապարանքում, ինչու նորա հայրը գալիս չէ, որ մեք ամուսնական դաշը քո և Լուդովիկոսի մէջ վերջացնէինք։ Դէպ ի իւր որդին խօսում էր այսպէս. Դու յայտնել ես ինձ քո գաղտնիքը, որ սիրում ես մի աղնիւ, կոմսուհի Բոհանին հաւասարապատիւ աղջիկ։ Ինչու դանդաղում ես դու քո սրտի ընտրած հարսը բերել դէպ ի իմ գիրկը։ Մտաբերիր, որ ժամանակը փախչում շուտով։ Ես զգում եմ իմ անձը մահուան վաստակած։ Երբ որ աշնանային մրրիկը ծառերը տերևաթափ կ՚առնէ, այնուհետև և իմ խախուտ մարմինը դէպ ի ցած կը գլորուի, անհետանալով յաւիտեան։

Մարկիզը այս հարցմունքին և խօսքերին ստացաւ միայն խոյստուղական (փախչողական) պատասխաններ։

«Դուք մի գաղտնիք ունէք ձեր մէջ, որ չէք ասում ինձ», ասաց Մարկիզը իւր զաւակներին։ Ո՛վ, գուրս թափեցէք դորան, գուրս թափեցէք

ցէք։ Ծածուկ բաները շատ անգամ անչափ ճնշումն և շինուումն հոգին դէպ ի մահ վկրաւոր, մեռանելուց յառաջ»։

Երբ որ Գուստաֆը կարող էր իւր հայրը կարճ միջոցով միայն թողել դարձեալ, որոշեց գնալ դէպ ի Վենսենն։ Նա կամէր փորձ փորձել համոզելու Մարգարիտը, որ ասէր նորան անունը այն մարդու, որոյ ընդդէմ բորբոքուած էր նա մահուչափ ատելութեամբ։ Մի մուխ ներքին գուշակութիւն ասումէր Գուստաֆին, որ իւր հօր հիւանդութիւնը պիտի որպիսի և իցէ յարակցութիւն ունենար Քուրբիերեան Մարգարիտի հետ։

«Ես կամիմ լուսաւորել տեսութիւն այս բանի մէջ», ասումէր նա, թէև այդ լինէր մի կրակ որ իմ կեանքի բոլոր, այնպէս գեղեցիկ երազած բաղդաւորութիւնը պիտի ուտէր ու սպառէր»։

Կա հասանելով պարոն Քուրբիերի կալուածին, գտաւ Մարգարիտը մատուռի մօտակայքում մի հովանոցի նստարանի վերայ հանգստացած։ Աղջկայ դէմքը աւելի գունաթափ էր, քան թէ առաջին օրերում։

Մարգարիտը տեսանելով Նորան, շուտով վեր կացաւ տեղից և մատուց Նորան ձեռը։

«Վա՛խ, բարեւա՛ լինի ձեր գալուստը, բարեւա՛ լինի, իմ բարեկամ։ Ա՛յսքան երկար միջոց տեսել չեմ Ձեզ և ձեր կարօտութեամբ մաշվումէի։ Ո՛հ, շուտով ահա բաց ի ձեզանից ոչ ոք լինելու չէր այլ ևս, որ ցաւակից լինէր իմ վշտին»։

Կա մեղմութեամբ թեք տուեց գլուխը երիտասարդի կուրծքին։ Գուստաֆը նկատեց, որ Նորա խօսքերը հնչումէին արտասուախառն հառաչանքով։

«Ի՛նչ է պատահել», հարցրեց նա։ «Դուք այդպէս ըմբռնուած էք ցաւից, այդպէս շարժուած է ձեր սիրտը»։

«Վո՛հ, իմ բարեկամ, իմ հայրս և իմ եղբայրս հրաժարուել են ինձանից, այժմ, երբ որ ես ահա մօտեցած եմ իմ նպատակին։ Գիտէք արդեօք — ես դէմուդէմ կանգնած էի այն մարդու առաջև — կիսով չափ արդէն խնդրել եմ հօրս վրէժը։ Երբ որ հարկաւոր կը լինի, ճնացածը կը լցուցանէք Դուք։

Գուստաֆը որոշեց կտրատել գործի կնճիռը (կապը)։

«Ընտրեսեցէք այս բոպէիս բոլոր մնացեալ մտածութիւնքը», ասաց երիտասարդը։ «Ես ցանկանումեմ տեսանել Ձեզ մեղմ և քաղցրասիրտ. պատճառ, ես կարօտ եմ Ձեր ներողութեանը»։

Աղջիկը զարմացմամբ նայումէր Նորա վերայ։

«Ի՞նչ ունէի ներելու Ձեզ», հարցրեց Մարգարիտը։

«Այի սխալանք, որոյ մէջ ես ձգել եմ ձեզ, սիրելի Մարգարիտ»։ Խաղաղութեամբ լսեցէք ինձ։ Լաննոյ անունով, իբրև չբաւոր ճարտարապետ որոնել եմ ես գրաւել Ձեր սիրտը։ Ես ասել չեմ Ձեզ, որ էի մի մեծատուն մարդու որդի — ճարտարապետը կամէր միայն իւր ինքեան պատ-

ճառով սիրելի լինել։ Փառք Աստուծոյ. ես հասել եմ այդ հեշտակաց նպատակին։ Մի բարկանաք իմ վերայ այդ պատճառով»։

Երիտասարդը բռնել էր աղջկայ ձեռը և քնքշութեամբ նայումէր նորա երեսին։

Մարգարիտը հիացած, յետ քարշուեցաւ։ Նորա երեսի վերայ ասես թէ մի ստուեր պատեց։ Բայց երբ որ նա հանդիպեցաւ երիտասարդի աչքի հոգելից հայեացքին, զարձեալ պայծառացաւ նորա ճակատը և նա խօսեց.

«Ես կը բարկանայի Ձեր վերայ, եթէ չսիրէի Ձեզ, իմ բարեկամ»։

Երիտասարդի շրթունքը շօշափեցին աղջկայ ձեռը։

«Ո՜վ, շնորհակալութիւն, շնորհակալութիւն, նազելի բարեկամուհի։ Թեպետ ես որդի եմ մի մեծատուն մարդու, որ այնպէս հարուստ է, ինչպէս պարոն Բուրբիները, այնու ամենայնիւ մի ճարտարապետ, որ իւր երազների կատարելութեան գաղափարը (իդեալը) յարգում է Մարգարիտի մէջ»։

Մանուկ կինը ժպտեցաւ հեգնութեամբ։

«Ուրեմն Դուք միայնակ չէք աշխարհիս վերայ։ Դուք ունիք հայր։ Գիտէ՞ դա ձեր սիրոյ մասին»։

«Մի քանի օր յառաջ տեղեկացաւ նա այդ բանին, և այն րոպէում, երբ որ նա առաջարկութեամբ ինձ ամուսնակցութիւն Յոհան կոմսի աղջկայ հետ։ Սկզբում նա բարկացած էր իմ վերայ։ Անցան շատ օրեր, առանց տեսանելու միմեանց։ Եւ ահա յանկարծ հիւանդացաւ նա մեզ ամենեցուն անբացատրելի պատճառով։ Իմ հայրս հիւանդութեան մահճի մէջ հրատարակեց, որ նա չկամէր տեսնել ինձ դեպ ի մի ամուսնակցութիւն, որ ընդդէմ էր իմ սրտին։ Նա յայտնեց իւր ցանկութիւնը տեսանելու և գրկելու իմ սրտի սիրած աղջիկը։ Արի, նազելի, իմ տրտում հրեշտակ դու, որ ես տանեմ քեզ ընդունելու նորա օրհնութիւնը»։

Մարգարիտը նայումէր իւր առաջև, յած թողած աչքը։ Նորա սիրտը ալեկոծվումէր տագնապից. բայց նա չկամէր պայծառակես այս խռովութեան պատճառը։

«Խոլորը, ինչ որ Դուք ասում էք ինձ, իմ բարեկամ», պատասխանեց աղջիկը մի կարճատև լռութենից յետոյ, «այնքան նորանշան բան է իմ համար, որ —»

«Ո՜վ, Դուք աւելի զարմանալու էիք», երիտասարդը շուտով ներս բերեց խօսքը, «եթէ ասէի Ձեզ, թէ մի երկուպատիկ խնամութիւն կապակցելու է մեր ազգատոհմերը»։

Մարգարիտը ականջները սրեց։

«Մի երկուպատի՞կ խնամութիւն։ Դուք, իմ բարեկամ, խօսում էք առակներով»։

«Ընդհա թէպէտ յայտնեմ Ձեզ այդ գաղտնիքը։ Ձեր եղբայր Լուգովիկոսը սիրում է — իմ քոյր Ֆելիսիտէն»։

Մարգարիտը զարհուրած, չիտ քարշուեցաւ։ Նորա գունատուած շրթունքը թոթովեցին այս խօսքերս.

«Ա՛յդ աղջիկը — Ձեր — քո՞յր —»

«Ա՛յո՛, Գեղեսիաէ Օրմօնդ»։

«Ա՜խ Աստուած — Աստուած — եկա՞ր —»

«Իրդի Մարկիզ Օրմօնդի»։

«Ո՜վ, իմ Աստուած։ Ո՛չ, ո՛չ», ձայն արձակեց Մարգարիտը, մահուան զարհուրած լեւռներով աչքը նորա վերայ»։ Ա՛յդ մի սխալանք է— Դուք կարող չէք—Դուք հաւաքձակու թիւն չունիք լինելու այդ հօր որդին»։

«Երդմանէ հաստատուն մեմ, որ իմ խօսքս ճշմարիտ է։ Բայց, ով Մարգարիտ, ժողովեցէք ձեր հոգու զօրու թիւնքը»։

«Երիտասարդը կամեր վեր կալնու լ աղջկայ ձեռը, բայց սա սաստկու թեամբ մերժեց նորան»։

«Վնա՛ս, հետացիր, ձայն տուեց աղջիկը»։ Խնդրու մեմ, աղաչումեմ, թողէք ինձ»։

Ձեռնեը կցած և բոլոր անդամները դողալով, ցած ընկաւ աղջիկը իր նստարանի վերայ։

Ա՛յժմ բաց ու արձակ դրած էր գաղտնիքը Կուստաֆի աչքի առաջև։ Նորա հայրն էր այն մարդը, որպ ընդդէմ վրէժխնդրու թեամբ վառուած աղջիկը կամենու մեր վնաս որել որդու ձեռքը։ Բայց երիտասարդի սիրտը չկամեր տակաւին հաւատալ իւր հօր մահապարտու թեանը։

Աղջկայ թիկունքը մեզմո թեամբ շօշափելով, ասաց երիտասարդը.

«Ծո՛ղ Հանդարտու թեամբ խօսենք միմեանց հետ։ Թո՛ղ դու այդ յուսահատու թիւնը, սիրելի Մարգարիտ»։

Աղջիկը սաստկու թեամբ վեր թռաւ իւր տեղից.

«Ինձ հաւաքձակ չէ սիրելի լինել ձեզ», ձայն տուեց նա։ «Պատճառ, ինձ ատելի է Ձեր հայրը։ Ինձ հաւաքձակ չէ իմ ձեռս պնել Ձեր ձեռի մէջ. պատճառ, Մարկիզ Օրմօնդը յափշտակել է իմ հօրից պատիւ, գոյք, կեանք»։

«Ախյց, եթէ այդ պատասխանութիւնը (մեղադրանքը) անհիմն լիներ», ասաց Կուստաֆը. «եթէ մի սխալ կասկածանք մնայնեցնու մեր Ձեզ»։

«Ա՛յսու հետև անկարելի է մի սխալանք», պատասխանեց աղջիկը սաստկու թեամբ։ Ինչո՞ւ յառաջուց ասել չէք ինձ Ձեր ճշմարիտ անունը։ Ա՛յժմ ես լինելու չէի Ձեր առաջև կանգնած, այնպիսի առնչութեան մէջ տանուտպելով, որպիսի տակաւին ոչ մի կնոջ հոգի ղպացել չէ»։

«Ներեցէք Մարգարիտ», ասաց Կուստաֆը յառ ակցու թեամբ լցուած։

«Ա՛յո՛, անբաղդ ու թշուառ եմ ես», ասաց աղջիկը. «որովհետև մի հօրին զարհուրելի պիշեր թափառութեամբ իմ ներսումը»։

«Մարգարիտ, եթէ Դուք մի օր սիրած եկեր ինձ —»

«Ա՛յո, ես սիրել եմ Ձեզ, Գուստաֆ, ես սիրում եմ Ձեզ տակաւին», ներս բերեց խօսքը, իւր աջը ձեռը սեղմելով սրտի վերայ։ «Այս պատճառով այժմ լինելու էր ինձ մահը մի բարեբարութիւն։ Ես վտահացած եմ դորան, ես աղերսում եմ դեպ ի երկինք. ողնայցրու ինձ, օգնայցրու ինձ այս ահաւոր ժամուս»։

Այնու ամենայնիւ չդադարեցաւ երիտասարդը աղաչանքով ու պաղատանքով համոզել նորա սիրտը։

«Ո՛վ Մարգարիտ» ասաց նա մեղմութեամբ, «լսեցէք իմ սիրոյ ձայնին, յաւիտենական սիրոյ ձայնին երկինքումը։ Դիտցէք թէ իմ հայրս մի ծանր անիրաւութեամբ մեղանչել էր ընդդէմ քո հօրը, թէև այդ անիրաւութիւնը դեռ ևս ապացուցած չէ,— քեզ համարձակ էր տանել այդ տղամարդը նորա բաղդի հպարտ փայլուղութեան մէջ, բայց հիւանդին, զուցէ թէ մեռանողին պարտ ես ներել»։

Մարգարիտը ձգեց մի բոցկղձէն հայեացք խոստովի վերայ։

«Ես գիտեմ Ձեր հօր որպիսութիւնը», ասաց աղջիկը։ Երկնային տեսչութիւնը ինդրել է իւր վրէժը նորանից։ Այդ մարդու մեղապարտութիւնը չէր ապացուցած, ասո՞ւմ է Դուք։ Ես երդմամբ հաստատումեմ, որ դա այնպէս պարզ ու պայծառ է, որպէս ցերեկի լոյսը։ Ես նորան կարող չեմ նեղել, երբէք, երբէք։ Այժմ գնացէք Դուք, տանեցէք ինձ, գարշեցէք ինձանից և թողէք ինձ մեռանել միայնութեամբ»։

Աղջիկը երեսը ծածկեցավ, բայց դարձաւ նորանից։

Գուստաֆը փորը ինչ միջոց նայումէր արտում իւր առաջև։ Ապա մօտեցաւ նորան և ասաց բարձրացրած ձայնով.

«Դուք պահանջումէք, որ ես հրաժարուիմ Ձեզանից։ Պիտի հնազանդուիմ ես։ Բայց, միևնոյն իմ տան կը հետանայ այս տեղից, ձայն եմ տալու Ձեզ. Դուք չպիտի մի կնոջից ծնած լինիք և ոչ ես կին լինիք, եթէ Ձեր ոսոր կարող չէր այս աշխարհումն արդէն շնչանել։ Ո՛վ իմ սիրելի, սէրը կնցուցանումէ, իսկ տանելութիւնը մեռուցանումէ։ Սէրն է մի շունչ որ փչումէ երկնքից, իսկ տանելութիւնը է մի ծխախտուն պղպջկ որ ելանումէ դժոխքից։ Մտածիր. ինչ որ դու կը տաս մեզ, կը հատուցանէ քեզ Աստուած։ Այժմ, որպիսական պարտականութիւնը կանչումէ ինձ դեպ ի հօրս հիւանդութեան մահիճը»։

Երիտասարդը շրջեց երեսը, որ հետանայ։

Մի պզտիկ քայլ նետ թափահարեց անբաղդ աղջկայ սրտի միջով։ Եթէ երիտասարդը գնար, եթէ նա չվերադառնար մի սանդամ, այնու հետև փոխելու էր կեանքը և իւրեանից։ Նա յարձակեցաւ երիտասարդի վերայ և կարկամած բռնեցնց նորա ձեռը։

«Լսէք, Գուստաֆ, կսկծ, մի հետացիր ինձանից։ Դու սպանում ես ինձ»։

Երիտասարդը մնաց զարմանած։

«Արեմն դու կամիս ներել, ով Մարգարիտ, եթէ իմ հայրս պատուար ևս լինէր»։

Տեսարանը գուշակող կնոջ տան մէջ յանկարծ պատկերացաւ Մարգարիտի հոգու առաջև։

Նորա ձեռը շուտով բաց թողից երիտասարդի ձեռը. նա ասաց աղօտ ձայնով.

«Լէ՛ գնա՛ — գնա՛, ով իմ Արարիչ, պահպանիր ինձ խելագարութենից»։

Ամենայորին ցաւի հայեացքով թողից Գուստաֆը և հեռացաւ աղջկանից։

Մարգարիտը անթարթ աչքով, երկար ու ձիգ միջոց նայում էր նորա հետևից ծառաստանի մէջ։ Վերջումը, երբ որ պատանին չքացել էր, ցած գլորուեցաւ նստարանի վերայ և ձեռները կցած նայում էր իւր առաջև։

«Ինչո՞ւ համար է այս տաղնապը իմ սրտիս մէջ», խօսում էր նա քթի տակ։ Ընդհ՞ր դղրդումն ինձ նորա խօսքերը որպէս ցաւերենականի որոտը։ Ա՛յո՛ — ճշմարիտ ասաց. Սէրը կեցուցանո՛ւմ. Ատելութիւնը մեռուցանո՛ւմ։ Երկնային տեսչութիւնը իմ կարդացած անէծքը կը թափէ դարձեալ իմ վերայ և ես կը ջաղջախուիմ նորա բեռի տակ»։

Միւս օրին Գուստաֆը ներս մտաւ իւր հօր սենեակը։

Մարկիզը վերջին դիշերին չէր ունեցել այնքան տանջող երազներ, ինչպէս յառաջ։ Ա՛յս պատճառով նորա որդին գտաւ նորան աւելի զուարթ քան թէ սովորաբար եղած էր նա։ Ա՛յս բանովս քաջալերուեցաւ նա և յանձն առաւ, անպատճառ յայտնել իւր հօրը մինչև այժմ նորան ծածուկ մնացած պատճառը, որ ձգել էր նորան հիւանդութեան մահճի մէջ և լցուցել էր նորա սիրտը մի անդադար երկիւղով մնհու։

«Իմ սիրելի հայր», ասաց երիտասարդը. այժմ կամիմ ես յայտնել Ձեզ անունը այն աղջկայ, որ իմ սիրտը ընտրել է ինձ կենակից»։

Մարկիզը մնտուց նորան ձեռը։

«Խարի է քո կամքը, իմ որդի»։

«Դուք կը հիանաք, երբ որ լսէք այդ անունը», խօսքը յառաջ տարաւ Գուստաֆը։ «Ա՛յդ աղջիկը ասվում է Մարգարիտ Քուրբիեռ և է քոյրը Քուրբիեր երիտասարդի, որոյ հետ կամիք դուք ամուսնացնել Փելիսիտէն»։

Յիրաւի, հիացած էր Մարկիզը, լայց ուրախական հիացմամբ։

«Ըղձարև, դա մի զարմանալի երկնային տնօրէնութիւն է», ասաց Մարկիզը։ «Բայց ընդհ՞ր մինչև այժմ չես ասել դու ինձ այնդ բանը։ Ես այնքան յաճախ խնդրել եմ քեղանից յայտնել ինձ քո սիրած աղջկայ անունը։ Ի՞նչ պատճառ ունեիր դու թաքուցանել և նորան ինձանից, որովհետև այդ ազգատոհմը պատկանում է մեր աշխարհի առաւել ազնիւների կարգին»։

Ա՛յնուհետեւ սկսաւ որդին պատմել հօրը իւր սիրոյ պատմութիւնը, սկսեալ առաջին հանդիպմանից Մարգարիտին Իտալիայում մինչեւ այս րոպէն, և թէ ինքն ոչ թէ իրրեւ մի Մարկիզի որդի, այլ իրրեւ մի չքաւոր ճարտարապետ, Լաննոյ անունով, գրաւել էր նորա սիրտը։

Ար ի թոյլ ժոռմն խաղաց նորա հօր գունատ երեսի վերայ։

«Ա՛րտարապետ մարդուն», ասաց նա, «պիտոյ էր ներել այդպիսի հրաշալի մոռածումնք»։

Ապա յաւելացրեց նա.

«Ինչպէ՞ս դու չես բերում այդ աղջիկը մեր տունն»։

«Ա՞ինչեւ կարող էի առնել այդ բանը», պատասխանեց Գուստաֆը, «ունեմ տակաւին յայտնելու Չեզ մի գաղտնիք»։

«Ի՛նչ գաղտնիք, իմ որդի»,

«Ինպէ՞ս, կը լինի՞ք դուք այնպէս սրտապինդ, որ կարողանաք լսել դորան»։

«Ի՛նչ խորհուրդ ունի այդ խօսքը, իմ որդի»։

«Պիտի՞ք դուք արդեօք, որ Մարգարիտը և Լուդովիկոսը չեն հարազատ զաւակներ պարոն Քուրբիերի»։

Մարկիզը հառաչեց յօնքերը։

«Ուրեմն պոռնկորդիք են», ասաց նա արհամարհաբար ձիգ տալով շրթունքը։

«Դուք սխալվումեք, իմ հայր, նորա պատկանումն մի ազնուական գերդաստանի։ Բայց նոցա հայրը քրէական յանցանքով դատապարտուած, արտաքսուել է Գրանսիայից»։

«Քրէական՞ն յանցանքով», հարցրեց Մարկիզը դողալով։

«Ա՛յո՛, իմ հայր։ Նա վախճանուել է դէպ ի Իտալիա ուղեւորութեան միջոցին։ Նորա ամուսինը իւր զաւակներով եկաւ Մոդենա, ուր ողբմեցաւ նոցա մինը այդ անբաղդների ազգականներից։ Նա մեծ կարեկցութեամբ ընդունեց դորանց և, երբ դոցա մայրը ցաւից ու տրտմութենից հալումաշ լինելով մեռաւ, որդեգրեց այդ երկու երեխայքը։

«Յառաջ տար խօսքդ—յառաջ տար, շշնջեց Մարկիզը ատամների մէջ։ Ես կամիմ—բոլորը լսել։

«Պիտո՞ի էր ինձ այժմ ասել Չեզ այդ երեխաների ճշմարիտ տոհմանունը»։

«Ա՛յո՛»։

«Ո՛չ ապա պիտութիւն լինի Չեզ—դոքա ասվումեն—Օլսանժեանք»։

Մարկիզը լսելով այս անունը, դղրդուեցաւ մի սարսափից. իսկոյն ցած կործանուեցաւ աթոռից, որոյ վերայ նստած էր, և երկու ծնկերի վերայ չոքած տարածեց ձեռները դէպ ի իւր որդին և աղերսեց մի դէպ ի մահ դատապարտուած մեղաւորի ձայնով.

«Ողորմութիւն, իմ որդի, ողորմութիւն. մի անիծիր ինձ»։

Այժմ գաղտնիքը բաց ու յայտնի դրած էր անբաղդ որդու աչքի առաջև։

Արգարիտը պատճառ ունէր մահու չափ ատելու Արկիզ Օրմճեղին։ Խօսքով ու կերպարանքով խոստովանեց նա այն յանցանքը որով պարտաւորուեմբ նորան Արգարիտը։

Առաջին անգամ, որ ըմբռնեց Գուստաֆի սիրտը, էր մի գարշութեան անգամ։ Բայց դա տևեց մի րոպէ միայն, որ տեղ տայ մի խորին կարեկցութեան։ Նա տեսանուեմբ իւր աչքի առաջև այն մի փոքր յատակ հպարտ տղամարդը կորիզուխ դրած հողի մէջ։ Նորա երեսի վերայ պատկերացած էին բոլոր տանջանքը որ կարող էր խիղճը պատրաստել մարդուս. նա հիւանդ էր, նա հասել էր մահու դրանը, և այնու ամենայնիւ էր նա իւր հայրը որ աղերսելով դրած էր նորա առաջև։

Գուստաֆը մօտեցաւ հօրը և կամէր բարձրացնել նորան։

Հայց Արկիզը ընդդիմացաւ։

«Ոչ, ոչ», թոթովեց նա։ «Թող մնամ դրած այս տեղ. չեմ արժանի, որ քո սուրբ ձեռները շօշափին ինձ, մինչև դու տեղեկացել էիր բոլորին»։

Ու ասես թէ դերբնական զօրութենից ստիպուած, ծնկերի վերայ խոստովանեց նա որդու առաջև իւր բոլոր անցած օրևրի գործերը։

Երբ որ խօսքը աւարտել էր, ու շարարձուած դէպ իջիտին գլորուեցաւ։

Գուստաֆը բարձրացրեց նորան և տարաւ հանգստացրեց մահճի վերայ և աշխատեց զարձուցանել նորան դէպ ի կեանք։ Անօգուտ եղաւ նորա աշխատութիւնը. հայրը կամաց կամաց բացեց աչքը և տեսաւ իւր անձը իւր որդու գրկում և նորա աչքերը արտասուքով լցուած։

«Դու լաց ես լինում, իմ որդի, ասաց հայրը նուաղ ձայնով»։ Այո, լաց եղիր դու, լաց եղիր, որ մի այսպիսի հայր տուել է քեզ կեանք։ Բայց, մի անիծիր ինձ, ինչպէս այն զարհուրելի կինը, գուշակողուհին։ Նորա աչքերը կամաց կամաց սպանուում ինձ, բայց քո անէծքը իսկոյն կը սպանէ ինձ։ Ո՛հ, և ես չկամէի մեռանել, մինչև իմ զաւակներս բաղդաւոր կը տեսանէի»։

«Ես քո որդին իմ», ասաց Գուստաֆը հեզու ձեռամբ։ Թէպէտև այն խոստովանութիւնը, որ դու արեցիր, ազդում իմ մէջ զարհուրանք. թէպէտև ինձ դարշելի էր յանցանքը, այնու ամենայնիւ չունիմ ես իշխանութիւն դատապարտելու քեզ։ Աշխատիր ճշմարիտ, առ ի սրտէ զղջմամբ հաշտեցնել Աստուած, և ձգող քո կեանքը այսուհետև լինի այնպէս, որ բոլոր բարի մարդիկը յարգեն ու սիրեն քեզ»։

Արկիզը տրտմութեամբ շարժեց գլուխը։

«Ատածիր որ ինձ մնում են միայն տակաւ օրեր ապրելու», պատասխանեց հայրը, «որ ես այլևս տեսանելու չեմ դժուարների տասերկուը, իմ

դաւաճանած բարերարի մահուան օրը։ Արդարեւ կինը գուշակել է ինձ այդ, և նորա անէծքը կը կատարուի։ Ո՜վ իմ որդի, եթէ հնար լինէր, որ անբաղդ Օրսանժի զաւակները սիրով միաւորուէին Ձեր հետ, այնուհետեւ կը մեռանէի ես քաղցր հոգով. որովհետեւ Դուք կը փոխարինէք նոցա այն լաւութիւնը, որի փոխանակ ես չկարացայ եմ գտանուել ընդդէմ նոցա հօրը»։

Վռւստաֆը աշխատում էր հանգստացնել խղճի խայթերից տանջուած հայրը։ Նա խոստացաւ նորան, զործ դնել ամենայն հնար պլուխ բերելու մի դաշնաւորութիւն երկու ազգատոհմերի մէջ։ Նա պատմել էր Մարկիզին, թէ Մարգարիտը կատարեալ ունի նորա վերայ, որպէս թէ նա էր որ ձգել էր իւր հայրը անբարոյութեան մէջ։ Բայց թէ Մարգարիտը արդէն հաւատի հաւարուէր նորան մեղապարտ, այդ մնաին դեռ ես լուռ կացաւ որպին։ Սա երկիւղ ունէր, մի գուցէ իւր հայրը առնեին խորտակուէր, լսելով այդ լուրը։

Ա՛յրջումը խնդրեց նա Մարկիզից նշանակել նորան գուշակող կնոջ, Բուլարդի օթևանը։

«Ի՛նչ կամիս գալ որանել այն տեղ, իմ որդի», հարցրեց Մարկիզը։

«Մնայ տալեցէք ինձ, այդ բանը տակաւին ծածուկ պահել Ձեզանից», պատասխանեց Վռւստաֆը։ «Ինչ գիտաւորութիւն, որ ես ունիմ, սպասաւոր է միայն Ձեր խաղաղութեանը»։

Մարկիզը ներկայացրեց նորան փոլոյը և տուեց։

Վռւստաֆը գրկախառնեց իւր հայրը և կամէր ապա թողուլ նորան։

Երբ որ արդէն մօտեցել էր նա դրանը, յետ կանչեց նորան Մարկիզը։

«Մի խօսք ևս ունիմ քեզ ասելու, սիրելի որդի»։

«Ի՛նչ է ձեր հրամանը, հայր իմ»։

«Ինչ զաղտնիք ես հաւատացել եմ Ձեզ — դորան չպիտի տեղեկանայ քո քոյր Փեվրիսեէն, այդ հրեշտակային մարդը եակը»։

«Միամիտ կացէք, հայր իմ. նորա սիրտը երբէք պղտորուելու չէ այդ ահաւոր տեղեկութեամբ»։

«Հ՞նարաւոր եմ քեզ, Վռւստաֆ։ Ա՞հ, ինձ ցանկալի չէր, որ Փեվրիսեէն պատճառ ունենար զարշելու (սիրտ և ազատելի համարելու) իմ յիշատակից։

«Փեվրիսեէն սիրում Ձեզ, իմ հայր, և սիրելու էր Ձեզ այն ժամանակ ևս, եթէ գիտենար բոլորը»։

Վռւստաֆը հեռացաւ։

Այսրա տուաչեն Հոգածութիւնն էր գտանել տիկին Բուլարդի տունը։ Նա կամէր արծաթով կամ սպառնալիքով դուրս քարշել նորանից, թէ ով էր բացել Մարկիզ Օրմենդի անցած գնացած օրերի գաղտնիքը։

Օգուտ և անօգուտ եղաւ Վռւստաֆի ջանադրութիւնը։

Երբ որ նա տեղ հասանելով թակեց դուռը, նորան տեղեկութիւն

տուեցին, թէ տիկին Բուլարդը արդէն երկու շաբաթ յառաջ գնացել է այդ տնից, և թէ ուր, չգիտէր ոչ ոք։

Գուստաֆը մի քանի օր հարց ու խնդիր արեց բոլոր փարիզի մէջ։

Բայց գուշակող կինը չքացել էր և մնաց չքացած։

Ահա խնդիրն այն էր, որ Գուստաֆը մի հնար գտաներ մեղմացնելու Մարգարիտ Քուրբիների սիրտը և վերացնելու այն խոր վիշտը (փոսը) որ իւր հօր յանցանքը փորել էր այդ երկու գերդաստանների մէջ։

Երկար և զուր մտածեց նա այս բանի վերայ։ Մարգարիտն ընդդիմացել էր նորա սիրոյ բոլոր խնդիր ու աղաչանքին. մի՞թէ նա շնորհելու էր մի ուրիշ մարդու այն բանը, որ նորան շնորհել չէր։ Եթէ Աստուած չուզար կէր մի պատգամաւոր երկնքից, վճռաժխտութեամբ վառուածի սիրտը կակղացնելու համար, մի մահկանացու երբէք կարող չէր այդ բանը գլուխ բերել։

Բայց Աստուած ուղարկել էր արդէն այդ հրեշտակը, թէև գա կրում էր տակաւին հողեղէն պատեանը մի նազելի աղջկայ։

Երբ որ Ֆելիսիտէն մօտեցաւ Գուստաֆին և արտասուալից աչքով խնդրեց նորանից բացատրել իւրեան, թէ ինչու այլ ևս համարձակ չէր ինքեան տեսանել Լուգովիկոս Քուրբիները և խօսել նորա հետ, շատուել կնդառնացաւ Գուստաֆի հոգու մէջ մի խորհուրդ. եթէ կարելի էր հաշտեցնել Մարգարիտը, այդ հաշտութեան միջնորդը կարող էր միայն լինել Ֆելիսիտէն։ Սորա խնդրանքին, սորա արտասուքին կարող չէր նա ընդդիմանալ։

Ահաւասիկ, ասաց նա իւր քուերը.

«Լուգովիկոսը սիրում է քեզ անկեղծութեամբ։ Պարոն Քուրբիները հաւան են այդ սիրոյն։ Բայց Մարգարիտը, երիտասարդի քոյրը չկամի ձեր ամուսնակցութիւնը»։

«Ահա անհասկանալի է ինձ», ասաց Ֆելիսիտէն, որովհետև Մարգարիտը քնքշութեամբ սիրում է քեզ»։

«Իւր իմ փեսացութիւնս մերժել է նա», պատասխանեց Գուստաֆը։ «Մարգարիտը է մի աղնիւ, վսեմահոգի էակ, այս պատճառով նորա բոլոր ընթացքը անբացատրելի է ինձ»։

«Բայց դու ոչինչ բացատրութիւն չե՞ս խնդրել նորանից»։

«Ի հարկէ խնդրել եմ. բայց նա չկամի հաշիւ ու համար տալ ինձ։ Թէպէտև նա ինքը գործով շատ անբաւղդ էր գտում իւր անձը, այնու ամենայնիւ հաստատ է մնում իւր խօսքի վերայ, որ ամենայն կապակցութիւն մեր մէջ քակտուի։

Ֆելիսիտէն մտախոհ նայում էր իւր առաջև։

Յանկարծ գարձեալ վեր բարձրացրեց երեսը։

«Ես կամիմ գիմել նորա մօտ, սիրելի Գուստաֆ», ասաց քոյրը։ Ես կամիմ հարցանել նորանից, թէ ինչ պատճառով նա բարկացած է մեր վե-

բայ։ Ես կամիմ խնդրել և աղաչել նորան, որ բաղդաւորէ մեզ ամենեքեանքս և իւր անձը։ կարծումես, որ նա ուշադիր կը լինի ինձ»։

«Դու կէս ճանապարհում հանդէպ ես գալիս ինձ», պատասխանեց հղբայրը. «պատճառ, ես կամէի իրատ տալ քեզ, որոնել նորա ծանօթութիւնը։ Նա կ'ընդունէ քեզ ծանրութեամբ, բայց ոչ առանց քաղցրութեան։ Այո՛, գնա՛ դու նորա մօտ, ընկէ՛ր նորա ոտքը։ Ինձ այնպէս է թվում, որպէս թէ յաջողուելու էր քեզ դէպ ի դուռ շարժել նորա սիրտը։ Այսօր իսկ կամիմ քեզ առաջնորդել դէպ ի վէնեեան։

Չելխսիտէն գնաց ղեկտաւորուելու։

Մի ժամ յետոյ նստած էր նա արդէն իւր հղբօր հետ մի սայլի մէջ, որ այդ երկուսը տանում էր ամրոցը պարոն Քոմբրիերի։

Ս. Նալբէանց.

(Շարունակութիւնը մեր առաջիկում)

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԻԹԻՒՆ

Թէ ինչպէս է յառաջադիմութիւնը կաթոլիկեան բեֆորմէ Իտալիայի մէջ։

(PROGRÈS DE LA RÉFORME CATHOLIQUE EN ITALIE.)

Revue britannique 1862. 3-e livraison.

(Շարունակութիւն.)

Կապուցինեան արեղայքը կարող են համարուիլ Բենեդիկտեանց ընկերքը այն մասին, որ նոքա իւրեանց կարգաւորութեամբ և կոչմամբ ունին ժողովրդի վերայ մի ազդողութիւն որ նմանակից է Բենեդիկտեանց ազդողութեանը կաթոլիկեան ընկերութեան կրթեալ դասակարգերի վերայ։ Կապուցինեան արեղան է էականապէս աղքատի հովիւը. լինելով ինքը մուրացկան արեղայ, ապրումէ նա ողորմութիւնով, և իւր անընդհատ յարակցութեամբ ընկերութեան բոլոր կարգերի հետ, պահպանել է իւր զգացողութիւնների և սովորութիւնների մէջ մի աւելի աշխարհական բնաւորութիւն քան թէ որ և իցէ միւս կրօնական կարգ։ Կապուցինեանք են խորհրդապահքը և մխիթարիչքը չքաւորների որ գտանումեն նոցա մէջ անձնանուէր բարեկամներ, միշտ պատրաստ հետևելու պարտականութեան ձայնին։ Նոցա կարգից են դուրս երևումէ Հռոմի եկեղեցու ամենաջերմեռանդ և ամենաճարտար սպասաւորքը։ Այժմեան առաքելական քարոզիչը, որոյ պաշտօնն է քարոզել միայն Պապի և կարդինալների առաջև, է տէր Լուիջի դի Ֆրենտօ, արդարև մի շատ ևրևելի կապուցին։ Սակայն քաջ յայտնի է, որ նա ենթարկուել է մատնողութիւնների վասն իւր ազատ կարծիքների, որ նա երբէք աշխատել չէ թաքուցանել, որ և խոստովանումէ նա իւր կարգակից կրօնաւորների հետ միասին։ Այս ազատ հոգին կապուցինների մէջ, չէ մի նոր թռուականի բան. նա այնքան բնական է նոցա կարգաւորութեանը, որ կարելի է ասել, թէ միշտ գտել է նոցա մէջ կուսակիցք իւր համար։ Երբ որ, 1847 թուական. Պիոս ինններորդը իւր ամնոռանոտու թեան նաւակատիքը կատարումէր անակնկալ վերանորոգութիւններ գործելով, հաւանական է, որ նա իւր առաւել ամուր նեցուկը և օգնականը գտաւ կապուցինեան կարգի

հին և հռչակաւոր դաստիարակ, կարդինալ Մրկարայի մէջ, և մեք մտածումներ, որ սորա յաջորդը խոտորուել չէ այս շատղի ընթացքից։ Հասարակասիրութեան հոգին այնպէս դերակշիռ է այս կրօնական կարգի կազմակերպութեան մէջ, որ նա միշտ շաղախուած է այն հասարակապետական ղգացմունքը որոց պիտոյ էր ընծայել նորա մեծ ազդեցութիւնը ընկերութեան ատելի ստորին դասակարգերի մէջ։ Միւս կողմից, ոչ մի այլ կրօնական կարգ կարող չէր այնքան սակաւ ենթարկուած լինել մեղադրանքի, հերձուածողական ձգտողութիւնների պատճառով, որովհետև, ոչ միևնոյն իւր բնաւորութեամբ չէ այնքան սակաւ մտահայեաց, որչափ կապուցինեան կրօնաւորների կարգը։ Կապուցինեանքը որպէս միաբանութիւն, էապէս և պարզապէս են լոկ գործունեայ քահանայք որ անկեղծ ջերմեռանդութեամբ իւրեանց անձը նուիրելով կրօնի սպասաւորութեան, ուսումնական և դաստիարակական հետաքննութիւնքը թողումեն այնպիսի միաբանութիւնների որոց անդամքը են առհասարակ ատելի կրթեալ քան թէ մեծ մասը իւրեանց կարգակիցների. բայց խոսելով ժողովրդի լեզուով և բաժանորդ լինելով նորա կարծիքին, պիտի ասենք որ նորա ստացել են ամենևին բնականապէս մի մեծ ընկերական կշիռ և յարգ։ Այսպէս, կարելի չէ երկբայութեան տակ ձգել թէ այս կրօնական կարգը յօժարամիտ էր, ինչպէս պնդումեն ընտանեբար, ընդդիմախօս լինել Պապի աշխարհական իշխանութեանը և քաջալերել այսօրեան յառաջխաղաց ազգային շարժողութիւնը։ Գոնեայ հաւաստի է, որ քահանայապետական իշխանութիւնքը հաւատումեն այս մեղադրանքին, որ դոյն այդ կարգաւորքը մեծ իտալական շփոթութեան մէջ ցոյց են տուել մի ընթացք որ հակառակ է եկեղեցական մարդերի սովորական ղգուշութեանը։

Եթէ, յիրաւի, այս երկու կրօնաւոր կարգերը պարունակումեն իբեանց մէջ բանասիրական տարրանին թը և ժողովրդական տարրանիւթը Հռոմի կաթոլիկեան սրբազնութեան մէջ, դոմինիկեան կրօնաւորքը կարելի է համարել ճշմարիտ փոխանորդքը նորա լոկ աստուածաբանական բնութեան։ Այո, կարելի է ասել հաստատապէս, որ նորա մի նախանձաւոր եռանդով և մի ամենևին առանձին հնազանդութեամբ ջանադիր են եղել միշտ ճնշել հերձուածողութիւնը և հաստատ պահել հռոմէական եկեղեցու վարդապետութիւնքը։ Այս կրօնաւորների կարգը հաշվումէ իւր որոշիչ արտօնութիւնների մէջ և իշխանութիւնը գործ դնելու մի բացարձակ դատաքննութիւն ինկվիզիցիոնական ատենի մէջ. պատճառ, երկու պլխաւոր պաշտօնակալքը Ինկվիզիցիոնի ընտրվումեն նորա միաբանների միջից։ Ուրեմն տեղիք կալ մտածելու թէ բոլոր կրօնաւոր և վանական միաբանութիւններից պիտի լինէր սա այն միաբանութիւնը, որ ամենայն դիպուածոտմ ատաւել անպիտոյ յանդիման կացուցանելու էր ուղղափառութեան կատարելութիւնը։ Սակայն յայտնի է մեզ որ եղել է և կայ տակաւին մեծ տհաճութիւն այս կարգ միաբանութեան մէջ այն վարքի և ընթացքի մասին, որ կանոնադրել

են եկեղեցու գերագոյն իշխանութիւնքը։ Երբ որ «Անսերմն յղութեան» դաւանութիւնը իրրև մեան հաւատոյ հրատարակուեցաւ Պապի բերանով, Դոմինիկեանքը հիմնուելով սուրբ Թոմաս Ակվինացու կարծիքի և իւրեանց կրօնական կարգի աւանդութիւնների վերայ, հատարակեցին մի ընդդիմութիւն որ պատրաստեց մեծ վշտովութիւն պապի պալատում։ Կարելի է, որ այն դժուարացուցիչ փորձը հետևանքների, որ կարող են յառաջանալ մի տարապայման բացարձակ իշխանութենից, ձեռնտու էր եղած զարթեցնելու նոցա հոգին աղատութեան։ Ա՛յս հոգին առաւելապես հանդիսացել է մի տեղում որի հետ կապակից են յիշատակներ, շատ յարմարաւոր յառաջացնելու այդպիսի հետևանք, այսինքն Դոմինիկեանների, սուրբ Մարկոս անունով վանքում Ֆլորինտինի մէջ, հռչակաւոր օթևանումը Սաւոնարոլայի։ Ա՛յս մենաստանը վայելում արտօնութիւն լիովին անկախ լինելու այս կարգի գաւառական պլոաւոր վերատեսուչներից. նա կառավարվում մի յաջորդ մեծաւորից որ ուղղակի ստորագրուած է ծայրագոյնին Հռոմի մէջ։ Ա՛յս ա-րեղայրը թէպետ և ուղղափառութեան դաւանողք են և հրատարակել էին մի բացայայտ պատողութիւն ընդդէմ իւրեանց հռչակաւոր եղբօր, այնու ամենայնիւ երբէք դադարել չէն մեծարել Սավոնարոլայի անունը. նոյնպէս, նոցա վարքը, որ շատ պիպուածներում ցուցել է մի խ՛ստ ներհակութիւն իւրեանց, Սանտա Մարիա Նովելլա անուն մենաստանի եղբայրակիցների վարքին, մի քանի ժամանակ եղել է կասկածանքի նիւթ։ Եկեղեցական իշխանութիւնքը շատ անգամ տեղիք են ունեցել անհատան լինելու խօսքի ու կարծիքի որ լսուած էին Սուբիակոյի մենաստաններում. նոքա նոյնպէս ըստիպուած գտանուեցան գործ դնել ընդդէմ մի քանի Դոմինիկեանց կամայական պատիժներ, որ յառաջուցել են շատ քնքուշ արտօնական խնդիրներ։ Արդարև զարմանալի չէր, որ Սավոնարոլայի գաղափարները թողած էին մի խոր որ վերջապէս կը զարթեցնէր մի հրապարակախօս կարծիք ընդդէմ Պապի աշխարհական իշխանութեանը։ Յայտնի է բաւական ընդհանրապէս, որ այսպէս է կարծիքը շատ կրօնաւորների Ֆլորենտինի մէջ եղած սուրբ Մարկոսի մենաստանում, այլև քանի մի դոմինիկեան հոգևորների որ այսօր լցուցանում են ինչ ինչ դգուշալի պաշտօններ, որ Հռոմէական քահանայապետութիւնը պահում Դոմինիկեանց համար իրրև մի վարձատրութիւն որ պատկանաւոր էր այդ կրօնաւորների ամենևին առանձին ուղղափառութեանը։ Կարելի չէ ենթադրել թէ Դոմինիկեանք ունէին այնպիսի ազատամիտ ձգտողութիւնք, որպիսի են բենեդիկտեան և կապուցինեան կրօնաւորների. սակայն ոչ ինչ պակաս արժանի է ուշադրութեան, գտանել քանի մի նշանք նմանապիսի տրամադրութեան մի կրօնաւոր ընկերութեան մէջ, որ այնքան նեղ կապերով կապած էր Հռոմի պալատի հետ և սնած էր կայր հնազանդութեան աւանդութիւններով։

Ինչ որ մինչև այժմ ասել ենք, բաւական է, մեր կարծիքով, փոքր ի շատէ հաստատելու այն մեծահարկի առաջարկութիւնը պարոն ղը Մօնթալամբերի իւր նամակի մէջ դէպ ի կոմս Կավուրը, որին գրուած էր նա այսպէս. «Ճշմարիտ կաթոլիկների մէջ, որ միայն էին, որոց հաւանութիւնը կարող էր կշիռ ունենալ կրօնական խնդրի մէջ, թող դոքա լինէին հոգևոր կամ աշխարհական կարգի մարդիկ», նա չէր գտանելու ոչ միևնոյն որ յաժար լինէր եղբակացնել իւր հետ, թէ աւելի շահաւէտ լինելու էր Պապին ինքնին հրաժարուիլ աշխարհական իշխանութենից։ Ահա է միևնոյն այն անխորհուրդ ստորաստութիւններից որ երբեմն յառաջ են բերում փաստաբանքը յուսալով ահ ձգել հակառակ կողմի վերայ մի ակնածելի բացախօսութեամբ։ Նոյնպէս անճիշդ լինելու էր, Մօնթալամբերի խօսքը ի մասին անսահման անձնանուիրութեան դէպ ի Պապի աշխարհական իշխանութիւնը համարել ճշմարիտ բացայայտութիւն կարծիքի բոլոր երկիւղած կաթոլիկեան աշխարհականների, որպէս դարձեալ անճիշդ լինելու էր Աբբայ Լակօրդեռին համարել բերանը բոլոր դոմինիկեան կրօնաւորների, կամ թէ այն ճառի մէջ որ հայր Ֆաբերը, կրօնաւոր աղօթարանական կարգի, հրատարակել է մեկնագրութեամբ «Անձնանուիրութիւն դէպ ի պապը», տեսանել աղօթարանական կարգի բոլոր միաբանների սրտի վկայութիւնքը։ Մեզ շատ լաւ յայտնի է որ, երբ մի այնպիսի բարձրագահ մարդ իւր միաբանութեան մէջ, որպիսի Ֆաբերն է, դուրս է թողում մի կարծիք, այնուհետև շատ անձինք բնականաբար յաժար էին տալ նորա խօսքերին հեղինակութեան կշիռ, մանաւանդ այնպիսի եկեղեցու մէջ որ սակաւ ձեռնտու է աղատ կամքի իրաւունքին։ Ուրեմն, երբ որ մի քարոզիչ խորհրդով և դիտաւորութեամբ խօսում հետևեալ կերպովս պապականութեան բացարձակ և գրեթէ իրրև եկեղեցական խորհուրդ անմատչելի սրբութեան վերայ, նոքա, որ ընտելացած չեն հռոմէական կաթոլիկ վարդապետութիւնների հետ, պիտի երկմիտ լինին, արդեօք կա՞ր տեղիք ենթադրելու, որ այս բանադատութիւնքը են միայն նորա սեփական երևակայութեան պտուղը։

«Յիսուսը լրացուցել է իւր անսահման սէրը և տուել է մեր սիրոյն հնար լինելու անսահման, դարձեալ երևելով մեզ մէջ իւր մարդկային բնութեամբ, սուրբ խորհրդի տեսակով։ Բայց նորա սէրը գրկում բոլոր արարչագործութիւնը, և նա հասկացաւ որ այս անտեսանելի բնութիւնը մեր մէջ բաւական չէր... Ահա նա որոնեց երկրի վերայ մի արժանի վոխանորդ իւր սրբութեան և իւր կարողութեան... նա որոնեց այն տեղ մի պատուանդան, որի վերայ կարող էր նա հաստատել իւր ամենակարողութեան նշանները... Պիտոյ է, որ այս պատուանդանը այնպէս նմանէր նորան, որ ամենայն մարդ իսկոյն խոստովանէր այդ նմանութիւնը։ Պիտոյ էր, որ այս նմանութիւնը լինէր այնպիսի, որ յարուցանէր հոգևոռանգութիւն և մի շատ անձնանուէր սէր։ Պիտոյ էր, որ դա լինէր տեսանելի համաստութիւնը

երեսուն երկք տարու... Իշխան քահանայապետը է Ցիսուսի երրորդ տեսանելի ներկայութիւնը մեր մէջ, ներկայութիւն մի աւելի վսեմական կարգի, աւելի խորախորհուրդ, աւելի անմիջապէս մեծակշիռ և աւելի բնութենական երրորդ անձնաւորութեանը, քան թէ նորա ներկայութիւնը աղքատների և մանուկների մէջ։ Պապը է Ցիսուսի փոխանորդը երկրի վերայ և աշխարհի թագաւորների մէջ վայելումէ բոլոր իշխանական իրաւունքը Ցիսուսի սրբազան մարդկութեան... Սա մի թագաւոր է իւր պաշտօնեների ըղձութեամբ իսկ. պատճառ, բոլոր թագաւորներից նա շատ աւելի մօտ է թագաւորների թագաւորին։ Սա է տեսանելի հովանաւորութիւնը որ անտեսանելի գլուխը եկեղեցւոյ գործումէ սուրբ խորհրդի մէջ... Նորա կարողութիւնը բղխումէ նոյն սրբազան սրտի խորքից, որից տեսել ենք մեք բղխիլ սուրբ խորհուրդը և աղբատների ու մանուկների փառաւորութիւնը... Պապը է տեսանելի կերպարանաւորութիւնը սուրբ խորհրդի, մատուցած մեր երկրպագութեանը... Եղբակացութիւնը որ պիտի առնենք վերևում ասածներից, է անշուշտ մեծակշիռ, և բովանդակվումէ ոչինչ պակաս բանի մէջ, քան թէ այս է. Անձնանուիրութիւնը դէպ ի Պապը է քրիստոնէական երկիւղածութեան էական մասը. սա չէ մի, հոգևոր կեանքից անկախ խնդիր, որպէս թէ պապական արժանաւորութիւնը էր եկեղեցւոյ լոկ քաղաքական մասը, մի սահմանադրութիւն, որ պատկանումէր նորա արտաքին կեանքին, կամ թէ դատավճիռ եկեղեցական կառավարութեան. սա է մի հաւատոյքի վարդապետութիւն, երկիւղածութիւն։ Ինչ որ առնումեն Պապին կամ ընդդէմ նորա, առնումեն նոյն իսկ Քրիստոսին։ Ինչ որ արքայական, ինչ որ քահանայական է մեր շատ սիրելի Քրիստոսի մէջ, բոլորը ամփոփուած է նորա փոխանորդի անձնի մէջ և գրած է մեր առաջև որպէս պաշտելի և մեծարելի բան... Մենք պարտ եմք պատուել Ցիսուսի փոխանորդը ջերմեռանդ հաւատով և մի պատկառանքով որ հեռի էր ամենայն քննողական դատողութենից։ Մեզ պէտք չէ ներել մեզ ոչ մի անպատուող մտածութիւն, ոչ մի կասկածանք, ոչ մի երկմտութիւն որ և իցէ բանի վերայ որ հայումէր դէպ ի նորա հոգևոր կամ աշխարհական իշխանութիւնը. պատճառ, նորա ժամանակաւոր թագաւորութիւնն իսկ կացուցանումէ մեր կրօնի մի մասը։ Մեզ պիտոյ չէ ներել մեզ մի անպատկառ դժրդողութիւն, որոշելով նորա մէջ և նորա գործունէութեան մէջ այն բանը, որ մեք համարումենք մարդկեղէն, այն բանից որ մեք համարումենք աստուածեղէն... Ցիսուսի Քրիստոսի օգուտը և շահը վտանգի մէջ են. ուրեմն թող արհամն կենանք և չերկրայենք մեր գործի արդարութեան մասին։ Այս մի մտածութիւն, որ յաճախ ըղձալեցուցել է իմ հոգիս, և որով կամէի վերջացնել խօսքս։ Իմ սիրոս անընդդիմանալի կերպով գուշակումէ, թէ նորա որ երկրիս վերայ առանձնապէս սիրելու էին Պապին որ հրատարակել է Անսեռին յղութիւնը, առանձնապէս երանելի կը լինին երկնքումը»։

Պրօտեստականներին շատ ու շատ ներելի է, եթէ նոքա տեսանումեն մի ակնյայտնի հայհոյութիւն այս նորանշան կարկատանքի մէջ, որ ջերմեռանդ կաթոլիկներ շատ, թէև առ ի սրտէ կը ցանկանային վարագուրել իւրեանց եկեղեցւոյ բարձրագոյն անդամներուն ցնորախօսութիւնը, անպատճառ պիտի համարեն մի այլանդակ մոլի ծնունդ։ Սակայն հեշտ կը լինէր յառաջ բերել այս տեղ մի ձիգ շարակարգութիւն այնպիսի կարծիքների որ տրամագծաբար (դէպ ուղիղ) ներհակ են այդ օտարամիտ բացախօսութեանը, այնպիսի կարծիքների որ խոստովանել են առաւել ուղղափառ աստուածաբանքը (որոց շատերն իսկ սուրբերի դասակից են արուած, և որոց կարգում հաշվումենք մեք սուրբ Թեոնաւրդոսը, դը Քլերվօ) որ ներելը են իւրեանց ամենաճիշդ կերպով դ ունպոպիա դէքսըլնիէն, որպէսզի պապ և նորա աստիճանաւորներուն մէջ, ինչ որ մեծ համբաւներ հարթիկներն, այն բանից որ մեծ խոստովանութենէ ասպատիկներն, և որ պապ ժամանակաւոր արժանաւորութիւնը չեն ընդունելէքեա դ հոն մէջ իրօք։ Բայց հերիք է մեզ գիտել, որ Հայր Փաբերի սեփական եղբայրքը մերժումեն նորա անտեղի գաղափարները։ Մենք ունինք մեր ոչքի տակ մի գրուած մանկագրութեանից *Gli ordini religiosi e l'Italia*, որ շարադրած է այն կրօնական հաստատութիւնների պաշտպանութեան համար, որ ահի մէջ էին, մի գուցէ ճնշուին։ Դորա հեղինակն է Հայր Կապելլարտօ, անգամ Նէապօլսի Աղօթարանական միաբանութեան, մի արդիւնաւորատար քահանայ և յայտնի իրրև ականաւոր մատենագիր։ Նոյն իսկ իրողութիւնը այս պաշտպանութեան, հերիքապէս վկայումէ նորա կաթոլիկական զգացմունքը, և այնու ամենայնիւ իւր բանադատութեան բոլոր ընթացքի մէջ նա չէ ընծայումէ ոչինչ աստուածեղէն բնութիւն եկեղեցւոյ աշխարհական հիմնարկութեանը. դորա հակառակ, բոլոր նորա փաստերը հիմնած են աղաւթեան սկզբունքի վերայ, այլև ի վերայ եկեղեցւոյ բաժանման թագաւորութենից. սկզբունք որ անմիաբանելի են Հայր Փաբերի յառաջ բերած պահանջողութիւնների հետ։ Հայր Կապելլարտօն ընդդիմախօսելով եկեղեցական կարգաւորների ճնշողութեանը իտալական կառավարութեան ձեռքով, պարզաբար պահանջումէ հռոմէական կաթոլիկ եկեղեցւոյ համար մի նոյնպիսի կացութիւն, որ նա ունի Անգլիայում և Ամերիկայի միացեալ տէրութիւնների մէջ, առանց օրէնքի և իւրէ պաշտպանելու աշխարհական իշխանութիւնը Պապի։ Նէապօլսի աղօթարանական Հայրը այնպէս յայտնաբար հրատարակել են իւրեանց խորհուրդքը ընդդէմ Պապի ժամանակաւոր իշխանութեանը և այնպէս նշանաւոր են կացուցել իւրեանց անձը իւրեանց ազատամիտ կարծիքներով, որ ազատ են մնացել այն դատավճռից որ հրատարակել էր տէրութիւնը ընդդէմ միաստուածական կարգաւորների։ Ամէն մէք ունինք հիմնաւոր պատճառներ կարծելու, թէ հարկաւոր չէր շատ հեռի գնալ, որ լսէինք դատապարտող ձայներ Փաբերի տարապայման խօսքերի վերայ, և թէ Բիրմինգամի աղօթարանական հարքը հաստատապէս հրաժար-

ուել են յանձն առնուլ պաշտպանել Բռօմթիօնի աղօթարանական հարց սըրտի պեղմունքը մտքի յափշտակութեան մէջ։

Մեր ընթերցողքը գուցէ թէ կ'ասէին իւրեանց, թէ, որովհետև բոլոր օրինակները ազատամիտ կարծիքների, որ մեք յառաջ ենք բերել, պատկանումեն իտալական եկեղեցականներին, դրա էին լոկ հետեւանք բացառողական և խառնակիչ հանգամանքի որ չունին ոչինչ աղդեցութիւն կաթոլիկեան հոգու վերայ առհասարակ, ուրեմն և կարող չէին համարուիլ նշանք մի ընդդէմ ներդործութեան, ճշմարտապէս ուղղափառ հոգիների կողմից։ Ա՛յս է ահա, որ Հռոմի պալատի ջատագով աստուածաբանքը և կանոնագիքը աշխատումեն ապացուցանել. այդ պատճառով և անվաստակելի ջանադիր են նոքա տարածել ժողովրդի մէջ այնպիսի հրատարակութիւնք, որպիսի էին գաբերինը, իրրև ճշմարիտ յայտարարը կաթոլիկեան սրտերի վկայութեան. և այդ իսկ պատճառով հարկաւոր է այդպիսի հրատարակութիւնքը տանել ու դնել այն չափ ու սահմանի տակ, որ արդարապէս կը պատկաներ դոցա։ Ա՛յս բանս աջողակութեամբ և նշանաւոր կերպով արել է մի կաթոլիկեան աստուածաբան, որոյ արժանաւորութիւնը և դիտութիւնը աղատ ու վեր են ամենայն հակառակութենից։ Մեք կամինք խօսել այս տեղ Դօլլինգեր վարդապետի վերայ։ Իւր հռչակաւոր բանախօսութիւնների մէջ որ արել է Միւնխենում, նա քննումէ Պապի աշխարհական իշխանութիւնը, ամենայն կողմից նայելով այդ խնդրի վերայ և եզրափակումէ հրատարակելով, որ Պապի հրաժարումը դորանից լինելու էր եկեղեցուն շահաւէտ։ Չէ կարելի տալ մի առաւելագոյն կշիռ այդ հրատարակութեանը. պատճառ, այս տեղ խօսքը մի այնպիսի մարդու վերայ է, որ աւելի, քան թէ մի պլ անձն կարող էր պահանջել իւր համար առաջին տեղը կաթոլիկեան աստուածաբանների և վարդապետների մէջ... Եւ ահա, այս մարդը ուղղափառ փաստերի (պատճառների) վերայ հիմնաւորումէ մի կարծիք, ամենեին հակառակ Հռոմի պալատին։ Վարդապետ Դօլլինգերի բոլոր կեանքը անց է կացել եռանդուն վիճաբանական գրուածների մէջ ընդդէմ պրօտեստականութեան. նորա մտաւոգրական քանքարը բացատիպլում է մանաւանդ մի եկեղեցական պատմութեան մէջ, որ սպասաւորումէ իրրև հիմք և առաջնորդ կաթոլիկեան համալսարանների մէջ։ Ա՛յնու ամենայնիւ այս ականաւոր աստուածաբանը հասել է այն եզրակացութեանը թէ պապական իշխանութիւնը ոչ թէ դ հաս է երթէ, ինչպես դա անարատապար պնդումէ Ֆաբերը, պլ դորա հակառակ, շատ վճռակար է նորան։ Ո՛չ մի ճանօթ պատմութիւն կարող չէ քայքայել այս եզրակացութեան կշիռը, ոչինչ կարողանալու չէ աղդել այդ անողոքելի դատաստանի վերայ։ Ա՛յո՛, Դօլլինգեր վարդապետը գուշակել է մի այնպիսի սաստիկ արշաւանք իւր վերայ, որ կարծել է թէ պարտ էր նորան իւր ճառերի ճակատումը դնել մի յառաջաբան որ վկայումէր նորա ձայնակցութիւնը եկեղեցու ուղղափառ հիմնական կանոններին և

այն դիտաւորութիւնքը, որ թելադրել էին նորան իւր գրուածքը։ Բայց ոչ մի արդարամիտ մարդ կարող չէր երկբայել այդ մասին, և այս արդարացուցիչ յառաջաբանը երբէք տկարացնելու չէ այն տպաւորութիւնը որ այդ սկզբնաճարտար բանախօսութիւնքը յառաջացուցել են ծանրախոհ հոգիների վերայ։ Մի ընդդիմախօսութիւն, որ գուցէ թէ պակաս նշանաւոր չէ, բայց նոյնպէս պարզ ուղիղ հակառակ Պապի աշխարհական իշխանութեանը, լսելի է կացուցանում իւր ձայնը երկրագնդի մի հեռաւոր մասնից։ Նեվիօրքումը հրապարակվում է մի կաթոլիկեան օրագիր, անունովս Brownson's Quarterly Review, որ ստացել է մեծ հռչակաւորութիւն իւր տարապայման պապասիրութեամբ, որ և տարածվում է Ամերիկայի բոլոր եպիսկոպոսների գրաւոր հաւանութեամբ։ Հռոմի պալատի համախոհների վերայ մեծ զարհուրանք բերելու, 1861 թուականի Յունվար ամսի Համարը յիշեալ օրագրի պարունակում էր իւր մէջ մի գիտնական ճառ եկեղեցին ու տէրութիւնը միմեանցից բաժանելու մասին, որ և ապացուցանում էր, թէ անպատճառ հարկաւոր էր Պապին հրաժարուիլ աշխարհական իշխանութենից, հիմնաւորուելով այնպիսի պատճառների վերայ, որ մի և նոյն էին Փօլլենդեր վարդապետի պատճառների հետ։ Այս մի զարմանալի և նկատողութեան արժանի համաձայնութիւն է։ Մի և նոյն միջոցին նմանապիսի հայեացք այդ խնդրի վերայ հրատարակուած են Անգլիայում տպուած օրագրերի մէջ, որոց պաշտպան ու յայտնապէս գործակից են երեք արքայութիւնների (Անգլիայի, Շոտլանդիայի և Իրլանդիայի) առաւել հռչակաւոր կաթոլիկները, մարդիկ, որ յայտնի են իւրեանց անդրդուելի սիրով դէպ ի իւրեանց հաւատը, որ և իւրեանց երկիւղածութեամբ, գիտութեամբ և պատուաւորութեամբ հասարակութեան մէջ, ազդումն անհնազանդութիւն ամենեցուն վերայ։

Մինչ այս նորանոր ձգտողութիւնքը բացերևումն հռոմէական եկեղեցու մէջ, մի նոյնքան մեծակշիռ փոփոխութիւն երևումէ թէ յառաջանումէր կաթոլիկեան աշխարհի առաւել նշանաւոր տէրութիւնների քաղաքագիտութեան մէջ, դէմ ու դէմ սոյն իսկ եկեղեցուն։ Իտալիայի պատգամաւորքը երևումեն յօժարամիտ դէպ ի այն կարծիքը թէ այլ ևս հարկաւոր չէր վարուիլ այնպիսի դժուշական ընթացքով, որ ցուցել են մինչև այժմ Հռոմի իշխանութեան մասին, և նոքա յայտնումեն ցանկութիւն առաջարկելու Պապին պայմաններ, որ զօրութեամբ հաստատելու էին եկեղեցու անկախութիւնը հոգևոր նիւթերի մասին։ Այսպիսի հայեացք չունին միայն սակաւաթիւ անձինք, այլ շատերը։ Իտալական կառավարութեան առաջին մինիստրը, որ այժմ դուրս է եկել իւր պաշտօնից, յայտնապէս խոստովանել է այդ կարծիքը խորհրդարանի լիակատար ժողովի մէջ, և դոյն կարծիքը կացուցանումեն հիմքը այն առաջարկութիւնների որ նորումն ուղղած են դէպ ի Հռոմի պալատը։ Հարկաւոր է խոստովանել որ այդ տեսակ առաջարկութիւնքը մի լուսաւոր տէրութենական մարդու կողմից, այնու ա-

մենայնիւ մի նորանշան բան է։ Մի այդպիսի իրողութիւն անօրինակ է պատմութեան մէջ, և եթէ յառաջադիմութիւն տային դորան, այդ լինելու էր մի շատ ու շատ խորհրդաւոր նշան, թէ մեծապէս փոխուած էին աւանդութենական յարակցութիւնքը պապի և տէրութեան մէջ։ Նոյն ժամանակին տեսանում ենք այս բանակռուացութիւնների մէջ, թէպէտ դոքա վերջաւորուած չեն, մի յաղթող ապացոյց յառաջադիմութեան որ կարծիքներ, համեմատ Րոսմինիու կարծիքներին, գործել են եկեղեցու և կաթոլիկեան աշխարհի մէջ առհասարակ։

Ա.յս առաջարկութիւնքը առաջին անգամը արած են 1861 թուակ. սկզբում; այն ժամանակին, երբ զանազան հանգամանք երևումէին թէ պիտի ձեռնտու լինէին նոցա յաջողութեանը։ Պապը դարձեալ փոքր ի շատէ յետ էր եկել դէպ ի այն դաղափարների կարգը որ նորա թագաւորութեան առաջին օրերում այնքան սաստիկ աղդել էին նորա ընդունական հոդու վերայ, և նա զանազան միջոցներում բացայայտել էր կարծիքներ որ, ըստ կսեալ նորա փախստականութենից դէպ ի Գայետա, միշտ դատապարտել էին Վատիկանում։ Ա.յս անակնկալ հանգամանքը մի քանի անձների, որ մինչև այն ժամանակը ստիպուած էին լուռ կենալ, պատեհ տուեց համարձակաբար յուցանել Պապին այն ձախորդութիւնքը որ նորա քաղաքավարական ընթացքը պիտի բերէր եկեղեցու վերայ։ Ա.յդ անձների մէջ գտանվումէր հայր Պասալիան, մի քահանայ որի ճարտարախօսութիւնը քարշում տանումէ լսողի սիրտը, մի խորին ուսումնական, մի անարատ բարեպաշտ մարդ, որ վայելումէ ընդհանուր յարգանք, որ և գտել էր Պիոս իններորդի առաջև մի ամենևին առանձին շնորհ և ընդունելութիւն։ Ցառաջուց լինելով նա Լիսաբեան, ստացաւ նա սուրբ Հօրից, որ շատ դժուար ստանալի է, թոյլտուութիւն դուրս գալ իւր կրօնաւորութեան կարգից. Թող այլ միւս նշանքը յարգութեան, նա կարգուեցաւ ուսուցչապետ փիլիսոփայութեան Հռոմի համալսարանում։ Ա.յսպէս, Հայր Պասալիան է մի հռչակուած կուսակից նոր կաթոլիկեանց բաժնին և նա միշտ ապացուցել է ջերմութեամբ, թէև մի երկիւղած եկեղեցական սպասաւորի համեստութեամբ, թէ հարկ էր Պապին հրաժարուիլ աշխարհական իշխանութենից։ Ա.յս կարծիքը արդէն հրատարակուած էր նորա կողմից այն միջոցին, երբ Րոմայնիա գաւառը (եկեղեցական տէրութեան մէջ) պատառուեցաւ Պապի իշխանութենից։ Ա.յն միջոցին նշանաւոր կացուց իւր անձը հրապարակելով մի գրուած որոյ խորհուրդն էր ապացուցանել, թէ Պապը բոլորովին աղատ է յանձն առնուլ որ և իցէ հրաժարումն իւր հողւոյսահմանից։ Հայր Պասալիան չունէր ոչինչ պատճառ յետ կանգնելու իւր սրտի վկայութիւններից, միտ դնելով այն բանին թէ ինչպէս յաջողդուէին միմեանց անցքերը, և իւր խօսակցութիւնների մէջ Պապի հետ, նորա հաւնելիչ ճարտարախօսութիւնը այնպէս քաջ կարողացաւ աղդել Պիոսի իններորդի մէջ հաշտողական գնացք, որ սուրբ Հայրը ձայնակից եղաւ նորա ուղևորութեանը դէպ ի Ցուրին, որ նա

կարողանար այն տեղ ինքնին գտնել կառավարութեան պարագլուխ մարդոց հոգին ու բնաւորութիւնը։ Այս ուղևորութիւնը, որ Հայր Պասալիան յանձն առաւ մի լիակատար իշխանութեամբ Պապի անունով և այն յատկացած խորհրդով, որ բանակոծ լինի մի կառավարութեան հետ որ բանադրուած էր Հռոմի պալատից, մի մեծակշռիռ իրողութիւն է, որ ապացուցանում վաւերական կերպով մի կաթոլիկեան օրագիր Իրլանդիայի (les Tablettes) մի մանրամասն յայտարարութեան մէջ, որոյ խորհուրդն է, ստուգել իրողութիւնքը ի բերանց ճշմարիտ չափով ու կշռով։ Այդ օրագրի 27 համարը Ապրիլի ընդունում է, թէ Հայր Պասալիան խորհրդակից լինելով Պապի հետ, մանրամասնաբար քննեց իւր ուղևորութեան դիտաւորութիւնը, և նոքա, որ պիտեն թէ ինչ անապատ կացութեան մէջ պահվում է մի եկեղեցական անձը, կը դժուարանան հաւատալ որ, եթէ նա իսկապէս վարուելու էր Պապի ցանկութիւններին հակառակ, ունեցած կը լինէր համարձակութիւն գնալու դէպ ի Տուրին, ապա դարձեալ գալու Հռոմ, առանց ենթարկուելու թէև ամենափոքր չանդիմանութեան կամ թէ անախորժութիւնների իւր մեծաւորների կողմից։ Դորա հակառակ, մեր սիրտը վկայում է որ Պապը այդ միջոցին բարեհաճութեամբ լսել է Հայր Պասալիայի բացատրութիւնքը իւր կարծիքների, որ և տասցան հաւանութիւնը ունի, եթէ ոչ, ինն կարդինալների և գոնէ ձայնակցութիւն հոգևորների բազմութեան և կշռաւոր բաժնի կողմից։

Մենք կարծում չենք, թէ անյաջողութիւնը այս ուղևորութեան որ որոշաբար վերջացաւ միայն մի քանի դատաւճիռներով տարաղութեան Հռոմից, պարտ էր ընծայել Տուրինեան պալատի անբարեացակամութեանը։ Գոնեայ այն ոճը, որով Հայր Պասալիան խօսում էր համարձակ պկնի իւր վերադարձին դէպ ի Հռոմ, ցուցանում էր նորա կողմից մի մեծ հաճութիւն։ Արդարև, նա յիւս էր եկել համոզուած, թէ բերել էր իւր հետ առաջարկութիւնք որ ձեռնտու պիտի լինէին վերջացնելու վէճերը իտալական կառավարութեան և Պապի մէջ։ Բաւական էր միայն մնաբերել Հայր Պասալիայի էապէս եկեղեցական բնաւորութիւնը, նորա անսահման անձնանուիրութիւնը եկեղեցուն և այն բարձր կարծիքը որ ունէր նա այս եկեղեցու յատկութեան մասին, որ մեք վկայեինք առ ի սրտէ, թէ պայմանքը, որ նա համարում ընդունելի, էին և ճշմարտապէս ընդունելի։ Մենք ինքներս կարծում ենք, որ կարող էինք պնդել թէ ամենամիտ առաջարկութիւնքը իտալական կառավարութեան, հայեցմամբ դէպ ի այն կացութիւնը որի մէջ ապահովելու Պապին ցուցանում նա իւր անձը պատրաստ, անօրինակ են, և տեղիք կայ զարմանալու որ Հռոմի պալատը կարողացել էր այնքան կուրանալ իւր յատուկ օգուտների վերայ, որ մերժեց նորանց։

Ս. Նազբեանց։

(Շարունակութիւնը միւս տետրակում.)

ՆԱՆՈՒՑՈՒՄՆ

ՀԻՒՍԻՍԱՓԱՑԻ ԲԱՐԵՄԻՏ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ·

Հիւսիսափայլը արագ քայլերով մօտենալով իւր տարեկան ասպա-
րէզի վերջաստհմանին, Հրատարակողը մի տրտում պարտականութիւն է
լցուցանում, յանուցանելով բարեմիտ Հայոց պարոններին, թէ օրագիրը
գալոց 1863 թուականում, միա դնելով այն ծանր և դժուար պայմաններին,
որոց մէջ գտանվում նա, ընթերցող հասարակութեան շատ սակաւաթիւ
լինելու պատճառով, կարող չէ այլ ևս յառաջ տարուիլ։ Ամենայն խելացի
անձն պիտի ձայնակից լինի Հրատարակողին, որ մի օրագրական մատենա-
գրութիւն պահպանվում միայն ընթերցասիրութեամբ հասարակութեան
մէջ. ուր չկայ այդ ընթերցասիրութիւնը, ուրեմն և ոչ կարիք լուսաւորու-
թեան, այն տեղ աւելորդ ու անխորհուրդ էր մի մատենագրութիւն թէ օ-
րագրական լինի և թէ որ և իցէ միւս։

Լինգ տարի է ահա, որ Հիւսիսափայլը գործ է կատարել ժողովրդի
մէջ Ռուսաստանում, գրեթէ մի հատ մարդ կրելով իւր ուսերի վերայ դարա
բոլոր ծանրութիւնքը։ Այդ բանին վերահասու լինել, այս ներկայ սերունդ-
դից շատ սակաւք միայն կամեցան կամ թէ կարողացան։ Ձենք զարմանում։
Անաչքնութիւնը անհասկանալի է նոցա, որ ինքեանք անընդունակ են նո-
րան։ Անաչքնութիւնը մի զոհ է, մի ծանր զրկանք է, մի ջերմ պատերազմ
հազար տեսակ դժուարութիւնների հետ. նա կարօտ է աշխատասէր
հոգիների, անձնուրաց աշխատասէր մարդկերի. բայց այդպիսի բարոյական
հերոսներ Հայոց կեանքի այժմեան պայմանների մէջ գոյանալ ևս կարող չեն.
եթէ գոյանային ևս, իբրև նորանշան երևոյթք, կարող չէին ոտքի հաստա-
տութեան տեղ գտանել իւրեանց։

Հիւսիսափայլի հրատարակողը գրեթէ ամենայն տարու վերջում յայտ-
նել է ժողովրդին օրագրի յառաջտարութեան անտանելի դժուարութիւնքը.
երկար ու ձիգ յայտարարութեամբք տեղեկութիւն է տուել Հայերին թէ որ-
պիսի պայմաններ ոչ թէ ցանկալի, այլ միայն անհրաժեշտ հարկաւոր էին
այդ մատենագրական ձեռնարկութիւնը հաստատ պահելու։ Դա տարի ու

հասկանալի լեզուով ասել է ամենեցուն, թէ մի օրագիր հրատարակող ուս-
ումնական կարող չէր միայն աշխատել, այլ կարօտ էր բանագէտ աշխատա-
կիցների, և դոցա պիտի արժանաւոր հատուցումն առնէր, ի հարկէ, նախ
ինքն ստանալով, որ ապա միւսերին կարողանար տալ։ Հրատարակողի պար-
տար պահանջողութիւնը, որ հիմնած է աշխարհի բարոյական և բանական
կարգի վերայ — առանց որոյ ոչ մի տեղ մարդկային ընկերութիւնների մէջ
ոչինչ կատարվում չէ — չդուռ մինչև օրս ոչինչ ուշադրութիւն։ Մեր սի-
րելի Հայերը կարդացին մեր գրած յայտարարութիւնը և վարուեցան միշտ
դոցա ներհակ։ Փոխանակ հեշտացնելու մեզ մեր գործը, փոքր ինչ կարդ և
կանոն պահելով, ամենևին դժուարացուցին դորան իւրեանց վեր ի վայր ան-
կարգութեամբ։ Հրատարակողը վերջացնելով օրագրի տարեկան շրջանը և
ոտք դնելով նոր տարու մէջ, ոչ միանգամ կարողացել չէ իւր ժամանակին
գործ հոգալ, գործ պատրաստել, որ իւր ժամանակին սկսանուէր հրատարա-
կութիւնը օրագրի։ Ամեն անգամ անախորժութիւնք, յետաձգութիւն և
պակասութիւն արծաթի, և այդ պատճառով յետամնայութիւն ամենայն
պատրաստութեան և կարևոր հոգատարութեան, և յետոյ անտանելի տա-
ւապանք և դժուարութիւնք հրատարակողի համար, կորուսած ժամանակը
դարձուցանելու, օրագրի ամնական տետրակները ժամանակի ընթացքին հա-
ւասարելու։ Հայերը փոխանակ իւրեանց անձը դատապարտելու, մեզ դա-
տապարտեցին, բամբասելով, իբրև թէ Հրատարակողը չկամէր շարունակել
օրագիրը, փոխանակ ասելու յատկապէս, թէ Հրատարակողը կարող ևս չէր
ձեռք շարժել, մինչև Հայոց Պարոնները յառաջուց, իւր ժամանակին, հո-
գալարձու թիւն չառնէին հատուցանելու նորան արծաթ, գոնեայ նիւթական
ծախքը սկզբումն ապահովելու համար. փոխանակ բանականօրէն մտաբեր-
լու, որ հրատարակողը կարող չէր յառաջ տալ և յետոյ ընկերագիրք ժողո-
վել, և այն մեր ազգի մէջ, ուր գիրք ասած բանը մի մեծ գոյութեան
քար է, ուր ընթերցանութիւնը, փոքր ինչ բան ուսանելու և լուսաւորելու
իւր հոգին, ամենավերջին հոգածութիւնն է։ Սորան կը վկայէ ամենայն անձն,
որ տեղեակ էր մեր Հայերի որպիսութեանը։ Հրատարակողը իւր մինչև այժմ
արած փորձերով, գիտէ միայն այսքան. եթէ Հայոց մէջ ծանուցումն է լի-
նում, թէ հարկաւոր էր ձեռնտութիւն մի գրքի տպագրութեան, ի հարկէ
արծաթով, ապա Հայոց մարդիկը — խօսենք նոցա լեզուով — կամէին մինին
տասերկու տալ, քանի որ գիրքը լոյս ընծայուած չէր, բայց երբ որ գիրքը մի
հնարքով լոյս էր ընծայուած, այնուհետև մինն ևս չկար տասերկուսից, և
տարիներ պիտի անց կենային, մինչև մի տպած գրքից տասն, քսան, երե-
սուն օրինակ վաճառուէին, իբրև թէ տպագրութեան ծախքը և աշխատա-
ւոր հեղինակի վարձը դուրս բերելու։

Ցաւումնք, զուր և անօգուտ եղան մեր բոլոր բանական խօսք ու զրոյցք
Հայերի հետ։ Մեր քարեմիտ հայրենասիրական աշխատաւորութիւնը չինե-

ցին մեր համար մի յանցանք և ձգեցին մեզ մի կատարեալ տանջանարանի մէջ. վոխանակ թևեր տալու մեզ, օրէ օր աւելի ազատութեամբ դէպ ի վեր թռչելու, ամենայն կերպով կտրատեցին մեր թևերը, ջարդեցին մեր զօրութիւնքը, անոտք ու անձեռք անդամալոյծ շինեցին մեզ, սոլալով գետնի վերայ։

Հայերի ներկայ բարոյական կացութեան մէջ ոչինչ օրագիր կարող չէ յառաջադէմ լինել, ոչինչ օրագիր, եթէ կամեր դա փոքր ի շատէ լուսաւոր գաղափարներ տալ ժողովրդին, պատերազմել ընդդէմ հնուց արմատացած միջնադարեան ֆանատիկոսութեան և դորա սուտ խաչվառներին. և Հիւսիսափայլը կարող չէ այսուհետև ոտքի վերայ մնալ այն պայմանների մէջ, որպիսի են ներկայ օրերի պայմանները։ Մի փոքր ի շատէ լուսաւոր հասարակութիւն չկայ մէջ տեղում, որ յարգէր ուսումը և պաշտպաններ ազգի աշխատաւոր ուսուցիչքը. բոլորը մի տգէտ, նիւթապաշտ, մարմնապէս միայն ապրող ամբոխ է. և դորա համար ինչ օրագիր, ինչ մատենագրութիւն։ Մի քանի հատուկտոր աղնիւ և պատուական մարդիկ, որ այո կան Հայ ժողովրդի մէջ ի՛սկաստանում և միշտ մնալու են մեզ յարգելի ու մեծարելի, չեն տակաւին մի լուսաւոր հասարակութիւն որ միայն կարող էր ազգի իմաստական բարիքը պաշտպանել և յառաջ տանել, այլ երևումն մեզ մի մի ծաղիկներ մի ահագին չոր ու ցամաք անապատի մէջ, մի մի փոքրիկ առուներ որ ամենևին կորչումն անչափելի աւազուտ դաշտի մէջ։ Այն մասը ժողովրդի, որ փոքր ի շատէ իշխանութիւն և բարոյական ազդեցութիւն ունի միւսների վերայ, ոչ թէ ներքին ընտրութեամբ և կոչմամբ, այլ մի գահավէժ յափշտակութեամբ, որ և ոչինչ բան չունի ազգասիրութեան հետ, ժողովրդի ցաւի և ուրախութեան հետ — այդ մասը ժողովրդի մինչև այսօր գործ է դրել և գործ է դնում իր իշխանութիւնը և ազդեցութիւնը, միայն փակելու և ծեփելու բոլոր դուռները և լուսամուտքը, որ Աստուած մի արասցէ, փոքր ինչ լուսի ճառագայթներ ներս թափանցեն, փոքր ինչ զուարթ և կենդանացուցիչ օդի հոսանք ներս խաշան դարաւոր ասիական բանտում փակածների մէջ։ Վերևից մի ապականիչ ներգործութիւն, իսկ տակից մի տգէտ և անկիրթ ամբոխ։ Չէ. այսպիսի անմխիթար պայմանների մէջ կարող չէ յառաջ գնալ լուսաւորութիւն, կարող չեն արմատանալ լուսաւոր գաղափարներ, կարող չէ ոտքի վերայ մնալ մի օրագիր, որ քարոզէ մեր պատուաւոր գործ, ազգասիրական աշխատութիւն, աշխարհաշինութիւն խոհեմ և իմաստուն հիմքերի վերայ, բարեկարգութիւն հայկական կեանքի յառաջադէմ ժամանակի հոգով։

Հիւսիսափայլի պաշտօնը Հայերի մէջ կը վերջանայ շուտով, խաղաղութիւն տալու իւր յարգելի բարեկամներին, խաղաղութիւն տալու իւր թշնամիներին, խաղաղութիւն տալու իւր յուսոյ բազմաչարչար անձին։ Հրատարակողը չկամէր այսուհետև ընդունել այն հայրենասիրական ըղձանքը իւր բարեկամներից, որ մինչև այժմ յանձն էին առել նորա, փոքր ի շատէ

օգնելով հրատարակողին, առանց թեթևացնելու այն բեռը, որ միշտ ծանրացել է մի հատ մարդու ուսերի վերայ։ Իւր թշնամիներին — ո՜հ, իւր մոլորուած սիրելիներին, թշնամիք չունի Հիւսիսափայլն հրատարակողը — կամէր նա խաղաղութիւն տալ, այդ խղճալի մարդերին որ մինչև այժմ իւրեանց մի հատ պարծանքը որոնել են այն բանի մէջ, որ հրատարակողի ամենայն խօսքը, ամենայն գաղափարը թիւր մեկնեն, կեղտոտեն և աղաւաղեն տկարամիտ ժողովրդի առաջև, խռովութիւն ձգեն դորա մէջ, դորան յարուցանեն ընդդէմ հրատարակողին — որպէս և արդարև յարուցին իսկ մի մանաւ, բայց ամօթ ու խայտառակութիւն հնձելով թէ ինքեանք և թէ իւրեանց պարագլուխքը։ Փառք և պարծանք Ռուսաստանի արդարութեանը։

Ինչ որ Հիւսիսափայլն հրատարակողը մինչև օրս արել է Հայոց ժողովրդի համար — ուղիղ տասնեակը տարի է, որ մի օր նորա ձեռնից գրիչը ցած չէ ընկել, գրելով և թարգմանելով իւրայինների դաստիարակութեան համար, ամենայն տեսակ նիւթի մէջ մշակելով նոր հայկական խօսքը, տալով նորան տրամաբանական կապ և հետևակցութիւն, ուրեմն և շինելով նորան բանական մտածութեան անօթ — այդ եղել է մի գործ, որ յանձն է առել նա իբրև մի մարդասէր բժիշկ, որ տեսանելով իւր ոտքի տակ մի հիւանդ, անյուսալի ձգած այն տեղ և դէպ ի մահ դատապարտուած, կամեցել էր, իւր բոլոր ճարտարութիւնը, իւր բոլոր բարոյական հնարները գործ դնելով, գոնեայ մի քանի կենսական կայծեր ներս փչել նորա պաղած ու սառած երակների մէջ։ Թէ ո՛ր չափով կարողացել է նա արդիւնաւորապէս գոհանուիլ, այնքան բազմաթիւ թշնամի, վնասակար ազդեցութիւնք ներգործելով ընդդէմ նորան սկզբից մինչև օրս, այդ թողում ապագայի անաչառ պատմագրութեան դատաստանին։ Հրատարակողին մնում այս րոպէիս ասել այսքան. Թէ նա առ ի սրտէ կամեցել է իւր ազգի ճշմարիտ բարին, ոչ թէ կամեցել է միայն, այլև աշխատել է գործով ու արդեամբք յառաջ տանել դորան։ Ձէ՞ հասել նա իւր նպատակին, նորա մեղքը չէ. բայց նորան մնում մի քաղցր, անկողոպտելի մխիթարութիւն, որ իւր հոգու և սրտի ամենայն ղօրութեամբ ձգտել է դէպ ի մի գեղեցիկ և հոյակապ նպատակ — հաւատալ, յուսալ և սիրել։ Եթէ այսուհետև կարող չէ նա իւր սիրելի ազգի համար աշխատել, գոնեայ կամի նորա վերայ աղօթել։

Ս. Նալբեանդ։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ·

ԲԱՐԻ ՄԱՐԴ·
ԳԵՐԱՊԱՏԻՒ Պ· Յ· Ի···ԵԱՆՑԻՆ
ՆՈՒԷՐ·

Վհաղցը է միշտ յիշել այն մարդու անուն,
Որից քղխում սէր ու բարութիւն·
Ինչպէս մի աղբիւր անապատ ակներից
Ընատ քղխում և սորա սրտից·
Ահա տեսանում վիճակը ազգի
Ընչուք ու թշուառ, յոյժ ողորմելի, —
Միտքը ցաւում, կարդում յորդոր,
—Նկէք, մոռացնք, եղբարք, հնար նոր·
Երբ տեսանում թէ իւր ազգի մէջ
Երկպառակ հոգին տիրում անվերջ,
Ընդերսում նա — թողունք այդ գրգիռ,
Հաշտութեան սիրոյ լինի՛նք դաշնադիր·
Երբ տեսանում այն մարդ պատուական,
Թէ չկայ ազգի մէջ մի տաճար ուսման,
Ընմօթ է առնում մեծատունք ժլատ,
Ընհոգ և անիրաթ, նեխեալ անձնապաշտ·
Ահա տեսանում երիտասարդներ
Որ սրտերի մէջ ունին ազգի սէր·
Նկէք, ասում, մի ընկերութիւն
Կազմենք, նորոգնք մեր աւերակ տուն·
Երբ տեսանում անուսում մանուկ
Որ թափառում ինչպէս խեղճ որբուկ,
Խնդայն ձեռնիցը բռնում կամաց,
Ի հինում նորան մի հայր ողորմած·
Մի խօսքով, երբ նա տեսնում ամեն
Մանուկ, պատանի որոնք կարօտ են,
Ահա միշտ անխնայ օժանդակում
Որպիսի կերպով և ձեռնհաս է·
Ընդպիսի մարդուն Աստուծոյ օրհնութիւն
Նա իմ թոյլ գրչից անկեղծ գովութիւն·
Թող տէտ ամրոխ իւր կուռքեր պաշտէ,
Նայց մեր պաշաւելին բարի մարդն է·

Սողոմն Մերկո-Լեանց·

1862 Յունուար· 6ուլիս 4 ին·
ԴՊՀԼՈՐ·

1. *Հիսխատիայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իր մէջ Ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մանաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ։*

2. *Լինագիտական Ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոցա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, Ճառեր զանազան ֆիզիքական յայտնագործութիւնների, հասարակաւոս Աստեղաբաշխութեան, Քիմիայի, Հանքաբանութեան և Ֆիզիօլօգիայի վերայ. այլև բանախոսութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենցաղօգուտ գիւտերի և յայտնագործութիւնների մասին։*

3. *Խարոյական, գեղեցիկ բանասիրական Ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով. Թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութիւնից. այլև Կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ։*

Յանկացողքը ստանալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի Հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. Въ Редакцію Армянскаго Журнала «*Сѣверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. *կամ թէ Մոսկվայի Նամակատանը այսպիսի հասցէով.* Въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Ցարեկան 12 *տետրակների գինը է* 8 *մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքներ համար* $9\frac{1}{2}$ *մանէթ։*

Одобрено Цензурою въ С.-Петербургѣ, 14 Августа 1862 года.